ՐԱՖՖԻ
ՔՈՐԴՈՇՅԱՆ

# ԱՐՏԱԿ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ







ՀՏԴ 069:39
ԳՄԴ 85.101+63.5
Ք 870

Ք 870 Քորթոշյան Ռաֆֆի
**Արտակ արք. Մանուկյանի անվան Թեհրանի հայոց ազգային-ազգագրական թանգարանի հավաքածուն** /Ռաֆֆի Քորթոշյան.-Եր.: Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ,2021.-68 էջ:

Աշխատությունը նվիրվում է ՀՃՈՒ կազմակերպության հիմնադիր-նախագահ, հայկական պատմական հուշարձանների ուսումնասիրության և պահպանության գործի առաքյալ, ճարտարապետության դոկտ. երջանկահիշատակ Արմեն Հախնազարյանի ծննդյան (1941 Թեհրան-2009 Աախեն) 80 ամյակին

Խմբագիր **Էմմա Աբրահամյան**

Սրբագրիչ **Հասմիկ Հովհաննիսյան**

Ձևավորողներ **Արմեն Գևորգյան**
**Լիանա Հովհաննիսյան-Քորթոշյան**

ՀՏԴ 069:39
ԳՄԴ 85.101+63.5

ISBN 978-9939-843-50-6

© ՀՃՈՒ հիմնադրամ, 2021
© Ռաֆֆի Քորթոշյան, 2021

Երևան - 2021

## ՆԱԽԱԲԱՆ

Թանգարանների նախօրինակներն ի հայտ են եկել մարդկային հասարակության զարգացման այն շրջանում, երբ առարկաները սկսել են պահպանվել ոչ թե որպես գործնական և կիրառական իրեր կամ հարստություն ու գանձ, այլ որպես գեղագիտական, վավերագրական և գեղարվեստական արժեքներ:

Կատարելագործման մի քանի փուլեր անցած մերօրյա թանգարանների հիմնական նպատակը, սակայն, ոչ միայն գեղարվեստական կամ գիտական նշանակության իրերի մեկտեղումն ու պահպանումն է, այլ նաև վերջիններիս ցուցադրմամբ կրթական ծրագրերին նպաստելը:

Հայ իրականության մեջ նմանատիպ թանգարանները երևան են գալիս՝ սկսած ԺԹ դարի կեսերից, երբ որոշվում է վանքերի գանձարաններում պահպանվող արժեքավոր հնամենի իրերը (մասունքներ, եկեղեցական իրեր ու հանդերձանք) մատչելի դարձնել հանրությանը: Այս գործում առաջատար դեր են ստանձնում Մայր աթոռ Սբ. Էջմիածինը և Վենետիկի Սբ. Ղազար վանքը:

Հայկական թանգարանների կազմակերպման աշխատանքները զգալիորեն ընդլայնվում և ավելի մասնագիտական ուղղություն են ստանում արդեն Ի դարի առաջին կեսին Խորհրդային Հայաստանում, իսկ Սփյուռքում, պահպանելով եկեղեցական բնույթը, իրենց բազմադարյա հավաքածուների հիման վրա հետզհետե թանգարաններ են ստեղծվում Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ (1930-ական թթ.), Զմմառի Սբ. Տիրամոր (1963 թ.) և Երուսաղեմի Սբ. Հակոբյանց (1979 թ.) վանքերում, ինչպես նաև Հալեպի (Բերիո թեմ) առաջնորդարանում (1991 թ.) և Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանում (1998 թ.):

Թեհրանի՝ Արտակ արք. Մանուկյանի անվան հայոց ազգային-ազգագրական թանգարանը, որը գտնվում է Սբ. Աստվածածին եկեղեցուն կից՝ «Վաչե Հովսեփյան» ազգային-մշակութային համալիրում՝ Քուշեշ-Դավթյան դպրոցի շենքի կիսանկուղային հարկում և ունի մոտ 500 քառ. մ տարածք, հիմնադրվել է 2008 թ.: Պաշտոնական բացումը տեղի է ունեցել նոյեմբերի 4-ին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա-ի կողմից:

Հաստատության առաջին տնօրեն է նշանակվում ճարտարապետ Շերլի Ավետյանը, որը Թեհրանի թեմական խորհրդի հանձնարարությամբ կատարել էր թանգարանի ձևավորման, կահավորման և գույքահավաքման աշխատանքները:

Այժմ թանգարանում պահպանվում են Իրանի հայկական համայնքներում կամ այլուր ստեղծված և տեղի հայկական եկեղեցիներում գործածված ԺԹ-Ի դարերի եկեղեցական հարյուրավոր իրեր ու սրբապատկերներ, ԺԵ-ԺԸ դարերի՝ շուրջ երկու տասնյակ ձեռագիր մատյաններ, ԺԷ-Ի դարերի տպագիր բազմաթիվ գրքեր, պատմական քարտեզներ, արխիվային նյութեր, տարազներ, ծիսական հանդերձանք և իրանահայ ժամանակակից արվեստագետների աշխատանքներ (գեղանկարչություն, քանդակագործություն, լուսանկարչություն), ինչպես նաև երջանկահիշատակ Արտակ արք. Մանուկյանի անձնական իրերն ու փաստաթղթերը:

Հավաքածուի հիմնական հատվածն այստեղ է տեղափոխվել Թեհրանի թեմի չգործող եկեղեցիներից՝ բացառությամբ տպագիր գրքերի մի զգալի մասի, որոնք թանգարանում են հանգրվանել ինչպես անհատ նվիրատուների շնորհիվ, այնպես էլ ազգային այլ կառույցների փակված գրադարաններից:

Այս աշխատությունը, որը կազմված է երեք բաժիններից՝ «Եկեղեցական իրեր», «Ձեռագրեր» և «Տպագիր գրքեր», նպատակ ունի ուսումնասիրողին ներկայացնելու թանգարանում պահվող, ցարդ չուսումնասիրված և հայագիտության համար մեծ արժեք ունեցող իրերի արձանագրությունները, ձեռագրերի հիշատակարանները և տպագիր գրքերի մակագրությունները:

Առանձնապես արժեքավոր են թանգարանում պահվող 18 ձեռագիր մատյանները, որոնցից վեցում (չորսը՝ նորահայտ) ամբողջությամբ պահպանվում են գլխավոր հիշատակարանները: Հայտնություն է 1420 թ. Երզնկայի Պռաստինք գյուղի գրչօջախում (Սբ. Զինավոր և Սբ. Քրիստափոր) ընդօրինակված Ավետարանը, որը նշված վայրում ստեղծված և գիտությանը հայտնի ԺԵ դարի միակ ձեռագրից (այժմ կորած է համարվում) ավելի հին է 39 տարով:

Այստեղ առաջին անգամ հրապարակվում են նաև 1470 թ. Ակզոր գյուղում, 1666 թ. Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ վանքում և 1673 թ. Ագուլիս գյուղի Միջի թաղի Սբ. Ընձայեցց լույս (Հակոբ Ալփյան) եկեղեցում ստեղծված ձեռագրերը: Հատկանշական է նաև, որ որոշ ձեռագրերում հավել-

ված են նորօրյա պատմության քաղաքական տարաբնույթ իրադարձություններին (օրինակ՝ 1946 թ. հայրենադարձությունը) վերաբերող հիշատակագրություններ:

Հարկ ենք համարում երախտագիտությամբ նշել, որ թանգարանում պահվող ցուցանմուշներն ուսումնասիրելու հնարավորություն ենք ստացել Թեհրանի թեմի առաջնորդ գերշ. Սեպուհ արք. Սարգսյանի բարեհաճ թույլտվության շնորհիվ և Իրանի պատմական եկեղեցիների կենտրոնի տնօրեն Շերլի Ավետյանի հրավերով:

Աշխատանքներին սիրահոժար օժանդակել են թանգարանի աշխատակազմը և Իրանի պատմական եկեղեցիների կենտրոնի աշխատակից Ալեն Գրիգորը:



# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՐԵՐ

2017 թ. թանգարանում պահպանված եկեղեցական իրերից արձանագիր էին 28-ը: Դրանք հրատարակվում են առաջին անգամ:

Ա. Հայելի. արձանագրությունը՝ 7 տող.

Անուն հօր եւ | որդոյ եւ հոգւ|ոյն սրբոյ ամէն: | Ի վաելումն Աբգար Յովհանջանին, | ի **Թէրան**, | թիւն 1850 մա(յ)իս(ի) 15-ին:



Բ. Թիկնոցի օձիք. արձանագրությունը՝ 28 տող.

Յ(ի)շ(ա)|տ(ա)կ է | հան|գու|ցե(ա)լ | Առ|աք(է)լ | մ(ա)հտ(էս)ի | Յակօ|բեան | Արս|ում|ենց: | Ի **Թէհ|րանա** | եկեղէ|ցուն, | Ս(ուր)բ | Թա|թէ|ոս|ի,| 18|55| ա|ք|ր(ի)լի | 1:



Գ. Սաղավարտ. արձանագրությունը՝ 29 տող.

Յիշատ(ա)կ է ոսկէ|զօծ վակաս | եւ սաղավարթն | ընծաեց | ի **Թէրանա** Ամենա|փրկիչ | եկ(ե)ղէցուն, | ի **Շուշի** | քաղիքացի | Արսումէնց | Թաթէոսն, | իւր | ծնօղացն | մայտէսի | Յակօփի | եւ մայր | Նանակուլին | եվ | եխբար | փաղա|թառամ | Առաք(է)լին, | որօ շիրիմն է | Ս(ուր)բ Թաթ|էոսի եկ(ե)ղէ|ցուն բարիս|ք(ու)մն, | 1855 | աքր(ի)լի 1:





**Դ.** Ձեռաց խաչ. արձանագրությունը՝ պարսկերեն, 8 տող.

... | متوفی لممالك

بکلیسای | ونک في شهر ذلقعده الحرا|م سنة ١٢٧٨.

Թարգ. .... *Վանաքի եկեղեցուն 1278 թվականի զիլղադղա ամսին (ապրիլ-մայիս, 1862):*



**Ե.** Սեղանի խաչ. արձանագրությունը՝ 3 տող.

Զս(ուր)բ Գեորգա եկեղ(ե)ցո ս(ուր)բ խ(ա)չ ընծայ վ(ա)ս(ն) | Խաչատուր Թադէոսեան, | 1876:



Զ. Սեղանի խաչ. արձանագրությունը՝ 8 տող.

Յ(ի)շ(ատակ) է | խ(ա)չս | **ամիթցի** | Կա(ս)պարին եւ որդի Մարթա - յին, | ընծաեց Ս(ուր)բ Ա(ստուա)ծածնա եկեղեցոյ: | 1879-|3-|24:



Է. Խաչ. արձանագրությունը՝ 7 տող.

Նուիրեց | Իսկէնդար | Վարդանեան, | 1897:

Ս(ուրբ) Գ(էորգ) եկեղեցուն, | **Դար-Ղազվին**, | **Թէհրան**:



Ը. Ձեռաց խաչ. արձանագրությունը՝ 5 տող.

Ստեփան | Մանուկեան, | նուէր **Վերի Չանաղչու** եկեղեցուն, | **Ղարադաղ**, | 1900:



Թ. Սեղանի խաչ. արձանագրությունը՝ 5 տող.

1901 | ամի: | Յիշատակ | Ս(ուր)բ Գէորգայ եկեղեցուն, | Նինոյ Սերովբխան:



Ժ. Սեղանի խաչ. արձանագրությունը՝ 7 տող.

Յիշատակ | **Վանակայ** | Ս(ու)րբ | Մինաս | եկեղեցուն, տ(իկին) Շուշանիկ | Աբրահամեանից, | 1923:



ԺԱ. Սեղանի զարդ. արձանագրությունը՝ 6 տող.

Ի յիշատակ | հանգ(ուցեալ) տ(իկին) Աշխէն Խ. Գալստեանի, | ծնեալ ի **Թէհրան**, | ի 12 յունվարի 1869 ամի, | վախճանեալ ի **Նոր Ջուղա**, | ի 28 օգոստոսի 1926 թ.:

ԺԲ. Սեղանի խաչ. արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Նւիրում ենք ս(ուրբ) խաչս **Մեշէդի** հայ(ոց) | ս(ուրբ) աղօթատան, հանգ(ուցեալ) Նարիման | և Հայրապետ Հայրապետեաններից: | Մեշէտ, 1939 թիւ:





ԺԳ. Բուրվառ. արձանագրությունը՝ 3 տող.

Բուրվառը նուիրում է **Մէշէդի** հայոց եկեղեցուն | Արմենուհին իր մօր՝ Աննա Ա. Գէորգեանի յիշատակին: | 1 նոյեմ(բերի) 1939:



ԺԴ. Սեղանի խաչ. արձանագրությունը՝ 5 տող.

Նւիրում ենք ս(ուրբ) խաչս **Մեշէդի** հայ եկեղեցուն | Քրիստ(ի)նէ Ղարիբեան, Հրաչեա ու Արմենակ, | ի յիշատակ մեր անմոռանալի հօր Մելիքսեթ Ղարիբեանի՝ **ագուլիսեցի**, | մահացեալ ի **Թէհրան** 14 նոյեմ-բ(երի) 1939 թ.:

ԺԵ. Խնկաման. արձանագրությունը՝ 5 տող.

Խնկամանը նւիրում է **Մէշէդի** | հայոց եկեղեցուն Ա|րմենուհին, իր մօր Աննա Ա. | Գէորգեանի յիշատակին: | 1939 նոյեմ(բեր):





ԺԷ. Սեղանի խաչ. արձանագրությունը՝ 2 տող.

Նւէր Մատթոս... Յ. Ղարախան|եանից **Համադանի** եկեղ(եցուն), 1940 թ.:





ԺԶ. Սեղանի խաչ. արձանագրությունը՝ 7 տող.

Հանգուցեալ | Կարապետ Վարդան Յակոբեանի | յիշատակին Վարդուհուց: | **Մէշէտ**, | 1940-|5-|VIII:





ԺԸ. Սեղանի խաչ. արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Նւէր **Մաշադի** հայոց | ս(ուրբ) եկեղեցուն Արսէն | Դանիէլեանից իր | հանգ(ուցեալ) մօր՝ Մարինոսի | յիշատակին, | 1941 նոյեմբ(երի) 10-ին:







**ԺԹ.** Աղավնի. արձանագրությունը՝ փորագիր, 2 տող.

**Մեշեղի** հայոց ս(ուրբ) աղօթատան, վաղաքառամ օր(իորդ) Արաքս | Մինասեանի յիշատակին իւր վշտակիր {ի} մօր Աստղիկից: **Մեշեղ**, 30 յունիս(ի) 1942 թիւ:



**Ի.** Սեղանի խաչ. արձանագրությունը՝ փորագիր, 2 տող.

Սաթենիկ Դաւթեանի յիշատակին, | **Մեշէղ**, 10 ապրիլ(ի) 1944 թիւ:

**ԻԱ.** Սեղանի խաչ. արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Նուէր **Մեշէղի** հայ(ոց) ս(ուրբ) աղոթատ(ան) | Վարդուհի Գասպա - րեանի յիշատակին | Աբգար Գասպարեանից: | **Մեշէղ**, 28 մայիս(ի) 1944 թիւ:





**ԻԲ.** Խնկաման. արձանագրությունը՝ 3 տող.

Մայրիկիս՝ Լուսաբեր Բէրբէրբաշեանի մահվան առթիվ նվիրում եմ **Մէշեղի** | ս(ուրբ) աղօթատան Վարթանուշ Բաղալե(ա)նից: | 1945-III-25:







**ԻԳ.** Սեղանի խաչ. արձանագրությունը՝ փորագիր, 4 տող.

Հիշ(ատակ) Ս(ուր)բ | Աստուածածնի | եկեղ(եցուն) Ա.-սից իր | ծն(ողնե)րին, 1945.9.8:

**ԻԴ.** Ձեռաց խաչ. արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Յ.Ն.|Թ.Հ.: | Յս. Քս.: | Յիշատակ | Ք.Ր. (՞) | Աղասեանից | 15-9-(19)45:





**ԻԶ.** Ձեռաց խաչ. արձանագրությունը՝ փորագիր, 3 տող.

Ի յ(ի)շ(ատակ) Սօֆֆիա Խօսրովի Գասպարեանի, | **շուշեցի**: | Հ(ամադանի) Ս(ուրբ) Ստ(եփանոս) եկեղեցուն 1948-VI.





**ԻԵ.** Սեղանի խաչ. արձանագրությունը՝ փորագիր, 6 տող.

Նւիրում եմ սոյն խաչը Ս. Աստւածածին եկեղեցուն, | յիշատակ Նշան Սարգիսե(ա)ն ընտանիքից: | 1947 | յունուար(ի) | 6-ին, | **Թէհրան**:





**ԻԷ.** Սեղանի զարդ. արձանագրությունը՝ փորագիր, 7 տող.

Յիշատակ | Կարապետ Արզուի, | առ | Ս(ուր)բ Աստ(ո)ւածածին | եկեղեցւոյն, | **Թէհրան**, | 1957:

**ԻԸ.** Ճարմանդ. արձանագրությունը՝ փորագիր, 9 տող.

Ի յիշատակ | Մէնիրէ | Մարտիրոսեան, | վախճ(անեալ) **Շահրուդ**, | 1961 թ.: | Իր ամուսին | Սարգիս | Մարտիրոսեանից, | 1963 թ.:





Թանգարանում 2017 թ. պահպանվում էր ԺԵ-ԺԸ դդ. 18 ձեռագիր: Ստորև ներկայացնում ենք դրանք ժամանակագրորեն:

Ա. Ավետարան, վայր՝ Սբ. Զինավոր և Սբ. Քրիստափոր, Պոլստինք, թիվ՝ 1420, գրիչ՝ Հովհաննես քահանա.

*Հիշատակարան գրչության ժամանակի.*

Ստէփանոսի, **Միւնեաց** եպիսկոպոսի զառաւել հրաշից արժանի, սոսկալի գերապանձութե. բանից գեղեցկազարդեալ պիտանացուացս, զառ ի չորից աւետարանչացն մեզ պիտութե. արտայայտելով վսամական բանիւ՝ տասնեցունց կանովնացն, նկարակերպ, խորանայարկ, գունակ գունակ դեղոցն, երփն երփն երանկմունքն, որոց հիզան զերկնային մարմն. մեստաղբսն բացատրելով պարտականապէս, այնպէս համազոյգ բանիւք, մի առ մի շաղաշարեալ զրնքերակացիցն. հոլովսն արտակալեալ վս. Յի. վկայութե. բանքն: Ուստի և խորանացն դեղոցն նկարատութիք. սկսեալ յառաջմէ կանովնէն, մինչև ցտասն երրորդն. արանէրկեալ. կարմրաւք սեանցն և խոյակացն՝ որք ի մարմնաւորութի. և ի խաչն մեզ պիտառեցին:

*Այլ.*

Արդ առաջին խորանն, չորս դեղաւք նկարեալ ունի զառաջին խորանին զչորք նիւթեան խորհուրդքն: Միւնքն ծիրանիք զհաստատութի էական աթոռոցն արտաքոյ տարերց: Հաւք՝ ի վերայ կամարացն սիրամարգք զհին աւրինացն, զմարգարէական և զընդրողականն արտաքոյ եկեղեցւոյ մարմնաւ, որ պաճուճիւք չխաւսելով ի նոր եկեղեցիս: Ապա երկրորդ խորանն՝ համապատիւ նմին չորք դեղաւք զարդարեալ զներկս ունելով զսեաւադեղսն, զխսկական գոյութին. ցուցանէ և նրբագոյն՝ վս. առաջին տեսողացն, յորոյ վերայ զկարմիրն կամարածնեալ: Վս. արեան զոհից պատարագաց ի խնդիր այ. ելողացն, իսկ ի միջոց կապուտակ նկարէն երփնեալ, վս. մարմնաւոր գնացիւք զհօգևորն կարգելով:

*Այլ.*

Յիշեսջիք ի սբ. աղաւթս և ի մեղսաքաւիչ պատարագս ձեր զպր. Մկրտիչն և զտր. Անանիան և զեղբայրն իւր զպր. Ազարիան և զքուրն իմ զՀռոբսիմին և զկողակիցն իմ զԵ... *(միտումնավոր ջնջված)* եւ զփոխեցեալն առ Քս. զպր. Պատուական և զորդին իւր զՅովհան - նէսն և զծնաւղն իմ զՌհալխաթունն և զայլ ամ. ազգայինս մեր զկենդանիս և զփոխեցեալն առ Քս.: Ով դասք քահայից. յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր առ Քս. ամէն: Ի յութ հարիւր հայոց թուականն և ի Կ և յինն (1420) սկսեալ նոր ամ, մատեանս գրեցաւ տրու -







նական., որ յորջորջի աւետարան: Որ ամբարեալ ունի յինքեան զվէպ փրկչին ներ մարդութե. զբանս և զգործս զանազան շարայ յեռեալ յոյժ հրաշազան: ... *(շարունակությունը՝ աստվածաբանական)*: Արդ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք յայս երախան, զՅովէս. գրիչս առնել յիշման արժան՝ զգրաւղ մատենիս. այս հոգէկան: Եւ ի խորտկացս այս զանազան, լըցեալ լինիք անմահական և ի գինոյն ուրախական զմայլիք ճըմլեալ նոր խառընման: Զստացաւղ տառիս այս վեհական զԱնանիայ քահայն. սրբազան և զծնաւղն զպր. Մկրտիչն. իւր հոգէկան բարոյ յիշման առնէք արժան: ... *(շարունակությունը՝ աստվածաբանական)*: Եղև զրաւ գրչութեն. աւետարանիս ի թուականթե. Աբեթական գրոհի [ՊԿ] և Թ և ի գալըստենէ կենարարին մերոյ [Ռ-]Ն ու ԾԱ (1451), իսկ յելանելոյն նախնի մարդոյն յանուշակ վայրէն ՅՉ ու ՀԱ (6771): Արդ գրեցաւ տառս ածային. և տիեզերաքարոզ սբ. աւետարանս ձեռամբ մեղսայ մակարդ ոգոյ և փցուն գրչի աւսկաւղի և ծաղկաւղի սուտանուն Յովէս. անարժան քհայի. ի մայրայքաղաքիս **Եզընկայիս**., *(միտումնավոր ջնջված)* երկիրըս, ի գեղն որ կոչի **Պռաստինք**, ընդ հովանաւ **Սբ. Զինաւորին, Սբ. Քրիստայփորու**, ի թվ. ՊԿԹ (1420) մարտի Ի (20): Ի հայրապետութեն. հայոց տր. Պաւղոսի և յառաջնորդութեն. մերում տր. Գրիգորի արք. եպոսի. և տր. Յոհաննիսի և պր. Սարգսի: Արդ աղաչեմ զամե-



նեսեան ովդ. ոք լուսերամից, որք հանդիպիք այսմ ածախաւ. մատենիս, կարդալով կամ աւրինակելով և կամ տեսանելով յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր զստացաւղ սբ. աւետարանիս, զսրբայսէր և զմաքրամիտ և զհեզայհոգի քահայն. զտր. Անանիայն և զկենակիցն իւր զԷլխաթուն և զծերունի ծնաւղն զպր. Մկրտիչն և զեղբայրն իւր զպր. Ազարիայն և զքուրն իմ զՀռոբսիմին և զկողայկիցն իւր զպր. Գրիգորն եւ զփոխեցեալն առ Քս. զծնաւղն իմ զՌհալխաթունն և զպր. Պատուականն և զՅոհաննէսն և զայլ ամ. ազգային սորէ հանգուցեալ ի դուռն **Սբ. Գէորգեայ Մեծ Զինաւորին**, որ ստացան զսբ. աւետարանս ի յարդիւնաւոր ընչի իւրեանց ի յիշատակութի. ոգւոց իւրեանց և ի փառս Քի. այ. կատարելով զբան մարգարէին, որ ասէ երանի որուն իցի զաւակ ի սիովն և ընդանի յեմ.: Ընդ նմին և յիշեսջիք զհեզահոգի զպատուելի և զիմաստնայսէր [աւա]գ էրէցն զտր. Մկրտիչն և զնորա բողբոջ որդին զտր. Յոհանէսն եւ ընդ նմին յիեսջիք զալևորեալ ծերունին զՅովէս քահայն. և զորդին իւր զտր. Մովսէսն աւրինայպահաւղ և զորդին նորայ Դե-...սիկն զտր. Ղազարն: Ընդ նմին և յիշեսջիք զիմաստուն և զաւրինապահ քահայն. զտր. Ներսէսն: Ընդ նմին և յիշեսջիք զՍիմէովն և զխոնարհ հոգին քահայն. եւ որ են սպասաւոր **Սբ. Գէորգեայ Մեծ Զինաւորին**, որ առատն է ի տուրս բարեաց և ողորմած յամի ձեզ և մեզ ողորմեսցի և նմա փառք յամի ամէն: Զաղքատս ի բարեաց և զփարթամս ի չարեաց զՅովաննէս սուտանուն գրագիրս աւսկաւդս և ծաղկաւդս և պատկերիս նկարաւդս սբ. աւետարանիս, աղաչեմ յիշել ի տր. և թողութի. խնդրեցէք յանցանաց իմոց զի յոյժ մեղուցեալ եմ և անարժան: Յիշեսջիք և զհոգևոր վարպետն իմ զՄօվսէսն և զՅովէս. վարպետն և զծնաւղն իմ զԿարապետ քահայն., որ ի հետ մեզ շատ աշխատեցաւ և զայլ ամ. ազգայինքն և ինքն և ինքն, որ առատն է ի տուր բարեաց յիշողացդ և յիշեցելոցդ առհասակ ողորմեսցի ամէն ամէն և եղիցի:

*Հիշատակարան հետագայի.*

Առք համագոյ անբաժանելի և միասնական սբ. երրորդութե. և մի ածութե. հաւր և որդւոյ և հոգոյն սրբոյ ամէն: Արդ զվերջին ստացաւղ սբ. աւետարանիս ի թվիս հայոց ՌԳ (1554) էր, որ ստացաւ զսբ. աւետարանս Ստեփանոս աղէն իւր սրտի աւժարութեբ. և եռափափագ սրտիւ ստացաւ զսայ հալալ ընչից իւրոց յիշատակ իւրն և իւր ծնաւղացն, հաւրն իւրոյ՝ Կիրակոսին և մաւրն՝ Սիրայխաթունին և կողակցին իւրոյ՝ Մէլիքխաթունին և որդոցն Դօլիփաշին, Կիրակոսին և կրսեր. որդին Մկրտիչ քահանայն և կողակիցն Անայխաթունին և Բհարին և որդոյն՝ Մարտիրոսին և կողակիցն Համանգուլին և որդոցն՝ Աբրիհամին, Ովասափին և որդին Առաքելին և կողակցին՝










Մինային և որդոյն՝ Մէլիքջանին և նորայբողբոջ որդոյն՝ Կիրակոս սարկաւագին և այլ ամ. անտանեացն կենդանեացն և հանգուցելոցն իշեսջիք ի աղաւթս ձեր և ած. ողորմի ասացինէք զպարոն Ստեփանոսին և որդոյն Մկրտիչ քահանաին, որ ի ձեռն այլ ազգաց գերի էր զաւետարանս վս. հոգոյ իւրոյ երետ բազում ինչս և է առ հոգոյ փրկութե. իւրոյ: Արդ աղաչեմք զամենեսեան որք հանդիպիք ի սմայ կարդալով կամ աւրինակելով յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր, զի զպարոն Ստեփանոսն և զորդին զտր. Մկրտիչն ով մեզ իշէ. լի սրտիւ ած. ողորմի ասէ ած. իւրն ողորմեսցի իւր միւս անգամ գալըստեանն ամէն: Ի թգրութի. շահ Թահմազին ի հյրպտութի. **Էջմիածնայ** տր. Միքէլ. կաթաղիկոսին և սուտանուն Ոհան փոքր իշատակս. գրողին, ամէն, հայր մեր:

*Այլ.*

Առք համագոյ անբաժանելի և միասնական սբ. երրորդութե. և մի ածութե. հաւր և որդոյ և հոգոյն սրբոյ. ամեն: Արդ զվերջին ստացաւղ սբ. աւետարանիս ի թվիս հայոց ՌԾԴ (1605), որ ստացաւ սբ. աւետարանս սուտանուն տր. Ղուկասն իւր սրտիւ ստացաւ զսայ հալալ առաւ սբ. աւետարանս պարոն ըՍտէփանոսի թոռն Առաքէլէն և իր հայրն տր. Մկրտիչն, որ Առաքէլս սբ. աւետարանս ծախեցի տր. Ղուկասին ի ՋՌ (6000) դեկնի: Թէ ազգական, թէ գեղական, թէ Առաքէլն ինքն, թէ այլ էլումն անի նզոված է սբ. աւետարիանիս պարդականէ աւրն ի դատաստանին: Վսն. առնէլին աւետարանիս վկայն Գրայգոս վարդայպէտն, ուլուն վկյ. Մարտիրոսն, վկյ. Յուղուղլուն, վկյ. հալակեցի Մարգարէն, վկյ. Սարկիս հաբէղէն, վկյ. ած., վկյ. որ տր. Ղուկասն առաւ հալալ ընչիս է: Յիշատակ իւրն և իւր ծնաւղացն հաւրն իւրոյ Մկրտիչն և մաւրն իւրո Դիլաշտն, իմ կողայկիցն Գուլին և իմ որդիքն Մկրտիչն, Իլիէլն., Յիսային և դուստրն Մարդին և եղբարքն Դաւթին և իմ քիրն Թուրվանդին և հանգուցեալ եղբարքն Էտկարն, Ովանէն և իմ հուրողբերն տր. Սահակն և իւր որդին Սարկիսն և իւր կողակիցն Շահումն, գրիչս սուտանուն տր. Թումէս, որ գրեցաւ և այլ ած. անդանացն, կենդանացն  և հանգուցելոցն յիշեսցիք ի աղաւթս ձեր և ած. ողորմի ասացէք տր. Ղուկասին: Արդ աղաչեմք զամենեսան, որք հանդիպիք հսմայ կարդալով կամ ուրինակէլով յիշեցէք ի մաքրայփայլ աղաւթս ձեր տր. Ղուկասին և իւր որդոցն, ով մեզ յիշէ լի սրտիւ ած. ողորմի ասէ, ած. իւրն ողորմեսցի իւր միւս անգամ գալըստանն ամեն: Ի թագաւորութի. շահ Ապասին, հայոց կաթողկոսն. Թաթէվու հայրապէտ տր. Մարտ[իրոս] արհիպկոսն.:

*Այլ.*

Ես՝ Առաքելս, տր. Մկրտի. տղայ, ծախէց Կարմիր աւետարանս Ղուկաս իրիցուն, ով որ հետ ու առաջ տայ անիծացաւ, ետիս լինի: Ես տր. Մէլքիսեթս ըս գիրեցի տր. Յոհան վկ., ած. վկ., աւետարան վկ.:

*Այլ.*

Դարձլ. յիշեցէք ուստայ Ղազարն, որ կոստղն նորոգէց, յիշցէք. ի Քս.:

*Կնքադրոշմ.*

Սուրբ Գէօրգ եկեղեցի, **Թէհրան**, 1882:

Բ. Ավետարան, վայր՝ Սբ. Աստվածածին, Սբ. Ստեփանոս Նախավկա, Սբ. Գևորգ Զորավար, Շատվան, թիվ՝ 1459, գրիչ՝ Մելքեսեթ քահանա.

*Հիշատակարան գրչության ժամանակի.*

Աւրհնութիւ. գոհութի. բարեբանութի. գթածին, ողորմածին և մարդասիրին, այ. հաւր, այ. որդւոյ, այ. հոգւոյն սրբոյ, եռանձնեայ, եզակի, համագոյ, համակամ, միաշար, անորիշ, անբաժանելի, անքակ և անքանակ միասնական սբ. երրորդութեն. այժմ և անզըրաւ յաւիտենիւ ամէն: Որոյ շնորհօք աւարտեցաւ եռահըրաշ և հոգիազարդ աւետարանս, որ է շաղկապեալ աւետարանչացն ըստ բազմերանգ գունոց ի մի ոստայն անկելով հանճար, զոր արւեստաւորեալ անուշոցաց ծաղկանց եւ դեփեցական կազմութբ., որ ըստ հոգւոյն յատկութե. նմանի: Զանազան որակութբ. գաղափարելով ըստ յոքունց արփիացելոցն դասակցութեց., առ ի յարմարումն եկեղէցոյ յաւդիւ խաղաղութե., գլխոյն պատշաճել, զի յայսմանէ կատարելութի. չորս աւետարանք ի բազում պատճառէ չորեք կերպեան կենդանիք, մարդ, առեւծ, եզն, արծիւ, չորս նիւթք աշխարհիս հող և ջուր, օդ և հուր, թշնամիք անհաշտելիք և սիրելիք անքակտելիք: Չորս չորս գիրք անուան ամենասբ. երրորդութեն. հայր, որդի, հոգի: Չորս գետք՝ բղխեալ ի դրախտէն՝ Փիսոն, Գեհոն, Տիգրիս և Եփրատէս: Չորս անգիւն և չորս եղջիւրք սեղանոյ: Չորս դէմք սրբոյ խաչին: Չորս առաքինութիք.՝ հոգւոյ արիութի., ողջախոհութի., սրբութի. և արդարութի.: Չորս ծագք տիէզէրաց՝ արեւելք և արեւմուտք, հիւսիս և հարաւ: Չորս բանք աւետարանիս՝ պատգամ և պատւիրան, սպառնալիս և աւետիս: Չորս բանիւ խաւսի աւետարանս.՝ հրամանաւ և խրատու, աւրինակաւ և վկայութբ. եւ այլ բզմ. պատճառքեն յորս գաղափարին չորէքեան աւետարանս, որոյ ցանկացող եղեալ սբ. աւետարանիս բարեպաշտ և ածասէր. տանուտէրն Մկրտիչ, որ միշտ և հանապազ բորբոքէր ի սէր սբ. և ի տիէզէրաքարոզ քառավըտակ սբ. աւետարանացս և ըստ բնաւոր բարուց բարւոյն ախորժական կամօք և մեծաւ տենչմամբ ստացաւ զսբ. աւետարանս ի հալալ վաստակոց իւրոց անջնջէլի արձան ի մըխիթարութի. հոգոյ իւրոյ և ի յոյս փրկութե. եւ ես յոգնամեղս և փըծուն ի գրչաց սուտ անուն քհ. Մելքեսէթ տեսի զփափագ և զսէր սորա զոր ունէր առ հոգեւորսն և ըստ իմում կարի յանձնառեալ կատարեցի զսբ. աւետարանս զայս ի թըւականութե. հայկազան տումարիս ի յինն հարիւր և ի յութն (1459), յերկիրս **ըՌ-ըշտօնեց**. ի գեօղս, որ կոչի **Շատուան**, ընդ. հովանեաւ **Սբ. Ածածնին.** և **Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային** և **Գէորգեայ Զօրավարին** և **Սբ. Ոսկեանց քհիցն.**, որ աստ կան կառուցեալ: Արդ յերես անկեալ աղաչեմ զձեզ ով մանկունք սբ. եկղցոյ. յիշեցէք ի Քս. զստացող սբ. աւետարանիս և









ած. ողորմի ասացէք Մկրտչին և ծնօղաց նորին՝ հաւրն՝ Յոհանիսին, և մաւրն՝ Շնօհուորին, և եղբօրն՝ Թումային, և կողակցին իւրոյ՝ Ջանմէլէքին և որդոյն իւց.՝ Գօրգիմէլէքին և մեծ պապուն Ածատրուն. և քեռեացն՝ Ատոմին, Կերակոսին և Վարդանին և և ամ. ա[ր]ե[ա]ն մերձաւորացն [ած. ողորմի ասացէք ամէն]: Դարձեալ յիշեցէք ի Քս. զծնօղսն Ջանմէլէքին՝ զԳուլամիրն և զՆիգարն և զեղբայրքն՝ զԲախշային և զԱշային և զդուստր Ջանմէլէքին, զՇադիփաշէն և զփեսայն զՅովանէսն և զորդիսն իւց. զԲարդուղիմոս., զԽոցդեղ, զԹմյ., զԸռըստակէս, զԳուլազիզ, զՆադրմէկ, զՄսրիմէլէք և զԹանսուխ և զայրն զՄսրոյն, զՎարդմանուկ և զորդիքն իւց. զԲարսեղ, զՅակոբ, զԽալեֆայ և զԳուլփայ, զփոխեցեալքն ի Քս. և դեռաբոյս տղայքն իւց. զՆերսէս և զՄուրատ: Ընդ նոսին և *(այրած)* զ[իս զ]Մելքեսէթ անարժան [քահանա] գրող սորա, [և զծնօղ իմ] զՍտեփան [և զԽոցդեղն և զորդի]ն իւր [զԱւետիսն, որ է ժառ]անգ [սբ. աւետարանիս և զքորն ն]ոսյ. և զԳօհար և զեղբայրն իմ զՍիրուն սրկգն. և զքոյրքն իմ զԴօվլաթ և զՀռիփսիմայ և զտըղայքն իմ զՍիրուն, զԳորգ և զԽալինար և զամ. արեան. մերձաւորսն իմ, յիշեցէք ի Քս. և ած. ողորմի ասացէք աղաչեմ զձեզ: Դձլ. կրկին աղաչեմ զամենեսեան սիրովն Քի. ած. ողորմի ասացէք ստացող ի սբ. աւետանիս. ածասէր. և բարէմիտ տանուտրոջն՝ Մկրտչին և ծնօ-





ղաց նորին՝ Յոհաննիսին և Շնօհուռին, և եղբօրն՝ Թմյին. և կողակ-ցին՝ Ջանմէլէքին և որդոյն հւց. Գօրգիմէլէքին և մեծ պապուն Ածա - տուր. և որդոց նր. Ատոմաւետիսին, զՆոյնոյֆարին և զկողայկիցն Ա[ւետի]սին զԽալինարն:

*Այլ.*

Արդ, ով եղբարք խնդրեմք ձեզանէ, որք հանդիպիք աւս. կարդլվ. բարձէք ի սմանէ զսղղալն և զպակասն և գրի խոշոր և մանտրն կամ օրինակէլով, արդ ով ած. ասէք:

*Ծանոթ.* գրչության ժամանակի հիշատակարանը տե՛ս **Երեմեան Ա.**, ԺԵ դարի մի նոր ձեռագիր աւետարան, «Բազմավէպ», 1952, № 10-12, էջ 244-245:

*Հիշատակարան հետագայի.*

Ես՝ Ազարայի, չեմ արժայն, ուստի անյուն Քս. տէր Յակոբս ծ. գինեցի սրբ. ածայշունչս. յիշայտակ ինձ և ծնուղաց իմոց տր. Միխթարին, ի Քս. ած. հաւգու...: Թէ կարդալով կամ թէ աւրինակով, մէն բերան ած. ողորմի ասացեք, ամէն:

*Այլ.*

Ի տրտմաչգեայ վշտալի տր. Յովհաննէս Խաչկէս., նուիրեալ զայս սբ. մատեան առ տր. Յակոբ քինյն., որ ի **Աբբարիք** գեօղն, ի **Ջուղյ**. 1840 յունիսի 12:



*Այլ.*

Ի 1887 ի 21 փետրվարի, ես՝ Սէք, և Սեթրաք Տր.-Յակոբեանս, որ վաղճանեցաւ մայր մեր Յէրիքն, մեր յօժար կամաւն այս աւետարանս տվինք տր. Գրիգոր Յախվէրտեանին, փոխարէն թաղման և ամ. արարողութե.: Ես՝ Շահվալատս, վկ.: Ես՝ Գալուստս, վկ. եմ:

*Այլ.*

Սոյն սուրբ ծաղիկ ավետարանը մենք՝ Տէր-Գրիգորեաններս՝ Յովհանէս, Այվազ, Արշամ, մեր յօժար կամաւ մեր սիրելի մայր Թամիեանի մայից եռոյ, նրա հիշատակին նվիրեցինք Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցուն: **Հէշմաթիէ** թաղ, **Թէյրան**, 1960 թուի, փետ. 28-ին: Արշամ:



*Գրչափործություն.*

Կու նշանակէ. Փլ. խբջբն բսզրվ, դտզւլ ժսյ. ՋՄԽՋ ռաբժ. փվլ. (*ծածկագիր*): Զայս գիրս, որ գրծ. է Քի. ծառայ Ավետս, գրեցի թվին ՌՃԾԷ (1708) շբաթ. Քս. գրախբէր: Փ-իւրին ընկերն Ք-էն է, Լ-իւնինն Ի-նի, ոք ոչ էդ պէսէ:

*Այլ.*

Հաղվերդեան ցեղը, որ սկզբում եղել են **Ջափլաղի Բաղմաղի** գիւղում, որ յայտնի են եղել անւամբ Ազառու որդիքն Շաhւէրդին,

*Ծանոթ.* ծածկագիրը եղբայրագիր է, որը վերծանվում է տառերի փոխարինման եւ և առաջ սկզբունքով. «Քի. ծառայ Ավետս, գրեցի թվն. ՌՃԾԷ շբաթ. Քսի.»:





Ալլավերդին, որ ձեռնադրուեց տր. Գրիգոր անունով քհնայ., ապա ձախորդ պարագաներից ստիպւած **Բաղմաղուց** չուում են **Բուրվարի** գավառը, նախ **Անաւշ**, ապա բնակութիւն են հաստատում **Չհանխօշ** գիւղում: Տէր Գրիգորի որդիքն՝ Եղիա, Ազիզ և Ենօքն, որոնք իրենց քաջարի գործունէութեամբ ստանձեցին հարստութիւն և հռչակ անուն հայ և պարսիկ լօռերի առաջ: 1880 զօրօրինակ պ. Ազիզը տանուտեր դառաւ բախտիարցի խաների կողմից քաջութեամբ հռչակ անուն արած ամեն տեղեր միշտ իր փոքր եղբօր՝ Ենօքի հետ ծառաներով ձիաւորւած շրջում էն խաներու մօտ՝ յաճախ զինւած հրացաններով: Շատերքն կ'յիշեն և թէ ականատես են եղած պ. Ազիզի ձեռնառատութիւնը և թէ քաջարի սիրտն: Օրինակ՝ **Չարբաղ** գիւղի Տերքաղ Հասանալի անունով յաղթանդամ անձն, լսելով Ենօքի ու Ազիզի համբաւ ու գովքը, լօռերու մօտ պարսաւում է թէ, ինչ եք գովում, հայի գնդակն մարդ չի սպանի, լուրն հասնում է Ազիզին, մտքում խորն դնում է մի օր, երբ նոյն մարդն գլխով զինուած անցնում էր դեպ **Անաւշ,** Ազիզն հիսանի տակով ճանաչում է, հեռւից շտկում հրացանը և կանչում դիմացի խանին, թէ նայիր հայի գնդակին ու իսքում ձիուն գլորում, քայիզն նոր հասկանում է միտքն, թամբըն շալկած գնում է պ. Ազիզի մօտ, ուր մեծ յարգանք ու պատւի առնում, երբ հիւրն բարի հրաժեշտ է տալիս













մեկնելու, պ. Ազիզն հրամայում նախօրոք մի լաւ ձի թամբած նւիրում է խանին, ահա ձիուդ փոխարեն միայն թէ միւս անգամ չկրկնես հայի ստորութիւնը, լաւ գիտցիր հայը հայ է և քաջազունի գործող: Միքայէլ Տ. Գ. Տր.-Պետրոսեանց: 1950, **Թէհրան**:

*Այլ.*

**Բուրվարի** շրջանը հեռու է ընկած քաղաքներից և պատած է բարձր սարերով, մաքուր է օդն ու կլիման: 1603 թ. Շահ Աբասի օրով զոհի թողել ու գաղթել են պապերն մայր **Հայաստանից**, նախ **Սֆահան Ջուղայ**, ապա **Փերիա** ու **Բուրվարի**: **Փանրահ** 700 ընտանիք, **Փահրա** 600, **Հումա**, **Ռայիլ**, **Խաիբթիա**, **Չունխրս**, **Քավազ**, **Գոլբհար**, **Անաւշ**, **Շաւրավա**, **Բուրք**, **Փարմիշան**, **Ջանխոշ**, **Չիշմփար**, **Չարբաս**, **Քունսորխ**, **Աբարիք**, **Ազնա**, **Մուղանակ**, **Խուրովաբաղ**, **Գուրան**, **Սանգսֆիդ**, **Գովզ**, **Խաքբաղ**, **Ղարաքիարիզ**, **Խորզնդ**, **Ֆարաջաբաղ**, **Դէյնով**, **Նասրաբաղ**, որ 1918 Տէր-Պետրո - սեանններն **Սանգսֆիդից** տեղափողեցին **Նասրաբաղ**: Սոյն գաւառն յաճախ հալածանք ննղութիւնների. են մատնուել ու միշտ աւանդաբար որդոց որդի հայրեր յոյս են տուել, թէ չպիտի մոռնաք ս. կրօն, ազգ ու հայրենիք, մինչեւ յոյսով ածվ. կվերադառնաք հայ-







րենիք և ահա 1946 թ. նժդեհ ու տառապեալ հայերու բախտը ժպտաց ու մայր հայրենիքի դուռն բացւեց ս. ներգաղթն սկսեց, առաջին կարաւանին **Ջափլաղ** գաւառի հայերն ներգաղթեցին, սկսած **Չարքաղից Հօսենաբաղ, Թոխմար**, **Հաջիաբաղ**, **Փրչստան**, **Քրք**, **Ջառնա**, **Գուրջի**, **Բաղմօվտի**, **Ազնա** և **Մարզիան** գիւղերն: Նոյն աշնանը ևս **Բուրվարուց** 7 գիւղեր ներգաղթեցին հայրենիք: **Քունտր**, **Չարբազ**, **Ջանխօշ**, **Շավրավայ**, **Բուրք**, **Անաւշ** և **Փահրայ** հայ գիւղերն, երանի, հազար երանի, որ արժան եղան ս. ջուր ու հողին, իսկ միւս գիւղերն մնացին դժբախտ ու թշւառ, քայքայւեցին, ցիրուցան դէպ **Թէհրան**, **Քեարաջ** և այլ տեղեր:

**Ջհանխօշ**. Ազիզ և Ենօք, Եղիա եղբայրներն **Ջանխօշ** գիւղն հաստատուելով ճոխացրին բոլոր շրջանը ու մեծ համբաւ հռչակե - ցին, յաճախ նեղութեան ու հալածանքի մէջ կռիւ էին բռնում տեղացի լօռերու խաների հետ: 1909 թ. **Նաջիվանդի** բարբարոս ցեղեր 800 զօրքով բաշիբազուկներ հարա էին տալիս, շրջապատում են **Ջանխօշ** գիւղն: Ազիզ և Ենօքն իրենց եղբայներով., դրացիներով դիմա - դրում, 5 օր աննդատ. կռւում, մինչև սպառւում է փանփուշ. ու մթերքը: Ազիզն Ենօք եղբօր հետ խորհելով, թէ այլևս ոչ մի տեղից յոյս, օգնութիւն չկան, որոշում թշնամու շղթայով կտրել և ժողովուրդն՝ կին, երեխա, չւել դէպի **Չարբաս** գիւղն և սկսում մեծ վայնասուն, թշւառ հայերն երկիւղից փախուստ են տալիս այդ րովպէին, զօրքի պարագլուխ Ալլահբախշը տեսնում հայ կանանց քօչելն, ձին քշում կտրում առաջներն որպէս կողոպտի և անպատուի: Շուտով նկատում Ազիզը տեսարանը, ձայն է տալիս Ենօք եղբօրը, քաջ եղիր ղէյրաթի ու պատուի ժամ է, պիտ սպանել հրեշին և փրկել նամուս, երկուսով զէնքերն շտկում դէպի գազանաբարոյ հրեշին, ուղիղ գնդակներն խրւեցին կրցքի ու դիաթավալ ընկավ սատկաւ, անվնաս հայերն դուս պրծան, իսկ գիւղն բռնեցին կրակով վառեցին 1909 հոկ. 10-ին, թշւառ գիւղացի ցիրուցան եղան, ամեն տեղեր ապրելու միջոց ճարել, իսկ պ. Ազիզ և եղբայրներն բնակւեցին **Շավրավայ**, քանի տարի ևս յաջող ապրելով մահ ճաշեցին: Սրանց ժառանքները եկան **Գովզ** բնակւեցան ու հտս. հետէ տեղափոխւեցան **Թէհրան** մայրաքաղաքն շնորհիւ Ենօքի որդի Արշակին ուր և սեփական տուներ սարքեց ու ապահովեցրեց նմանապէս և միւսներն: Յիշեցէք և զիս նւաստիս Միքայէլ Տ. Գ. Տր.-Պետրոսեանց:

Գ. Ավետարան, վայր՝ Սբ. Գևորգ, Սբ. Հակոբ Սքանչելագործ և Սբ. Նշան՝ Ակոր, թիվ՝ 1470, գրիչ՝ անհայտ: Կազմի երկու կողմե - րում կցվել է ավելի վաղ ժամանակի Ավետարանից առանձնացված երկու թերթ: Ավելի ուշ ազատ էջերում ընդօրինակվել է նաև «Գիրք հարցմանց երիցս երանելի սրբոյն հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն»:

*Հիշատակարան գրչության ժամանակի.*

Արդ եղև զրաւ գրչութե. այսմ ածային. սբ. աւէտարանիս, ի թվականութե. հայկազեան տաւմարի ՋԺԹ (1470), ի դառն և ի դժնեա և յանբարի ժամանակի, յորում նեղեալք յանաւրինաց և յանիրաւ պահանջողաց Խ... *(միտումնավոր ջնջված)*, ի գեւղս, որ կոչի **Ակգաւր**, ընդ հովանեաւ **Սբ. Գէորգիս** և **Սբ. Յակովբ Սքանչելագործ Խաչիս** և **Սբ. Նշանիս** և այլ սրբութեցս. որ աստ կան եւ սբ. եղբարցս՝ Եւղալամշին, քոյրն իւր՝ Նասրագուլն և Դաստագուլն, ած. յիշէ զիրանքն, Համանգուլն ի բարին:

*Հիշատակարան հետագայի.*

Զվերջին ստացողն սբ. աւետարանի{ն}ս զԱռաքելն, որ ըստացաւ զսայ ի խալալ վաստակոց իւրոց, յիշատակ իւր և ծնաւղաց իւրեանց՝ հաւրն Պարսումին և մաւր Սինամին եւ քվերք Թամամ և զՕղլնփաշէն. և Ջաւվարդն և զՄերում եւ զորդիքն իւր՝ Գրիգոր և զՎարդանէս, Սիայմոն և դստերն իւր Էմէնփաշէն, Սաւլթանփաշ., Ազիզփաշէն: Յիշեցէք և ած. ողորմի ասացէք նց. ամէն: Դարձեալ յիշեցէք կրկին անգամ զԱռաքելն և զկողակիցն իւր Սլիմ. յիշեցէք և ած. ողորմի ասացէք ամն. ած. ողորմի: Դարձեալ յիշեցէք զԳրիգոր. որ և զկողայկիցն իւր զԱւրէն և զորդեքն իւր Ածայտուրն., Յակոբջան, Սիայմոն և զՊարսոնմն. և զդստերնք. Գուլվէրիխան և զՄարիամն, Աւղլանփաշայէն և զՏուտումնին դուստր Մուրասայ յիշեցէք և ած. ողորմի ասացէք նցայ ամէն: Ած. ողորմի հայր մեր, որ եօթն բանն, որ Քս. խօսեցաւ ի վերայ խաչին, առաջին թողսց. զմեղս, Բ. այսօր ընդ իս իցես ի դրախտին: Գ. կին ահայ որդի քո: Դ. ծարաւի եմ: Ե. էլի էլի լամասայ փաքթանի: Զ. զձեռս քո աւանդեմ զզոգի իմ: Է. ամ. ինչ կատարեալ է: Թվն. ՌՂԹ (1640):

*Այլ.*

Թաթէոսն, որ ած. է տուր, թին. ՌՄՂԱ (1842), փվր. 13, ըՌայթէոսն, որ ած. է տուր թվին ՌՄՂԱ (1842), Պետրոսն, որ ած. է տուր թին. ՌՄՂԲ (1843):

*Այլ.*

Զվերջին ստացողն Տիգրան Յովսէփեան՝ որդին Յովսէփի և թոռն տէր Վարդան պապի: Տիգրան:



















Դ. Ավետարան, վայր՝ Սբ. Ամենափրկիչ, Նոր Ջուղա, թիվ՝ 1666, գրիչ՝ Ազարիա.

*Հիշատակարան գրչության ժամանակի.*

Փառք ամենասբ. երրորդութեն. հօր և որդոյ և հոգոյն սրբոյ այժմ և յաւիտեանս անզրաւ յաւիտենից, ամէն: Արդ ես՝ զտրուփ և անարժանս սուտանուն քրիստոնեայս. Ազարիայ, շնորհօքն Քի. և ողորմութբն. ի վերջ հասուցի ըզսբ. աւետարանս ի թուականիս հայոց ՌճԺԵ (1666) ամին, ի հայրապետ. հայոց հանուրց սեռի տեառն Յկբա. սրբազան կթղկսի. և ի վր. տեսչութե. նահանգիս հեզահոգի տեառն Դաւթի և  Ստեփաննոսի: Արդ գրեցաւ զսբ. աւետարանս ի գեօղաքաղաքն **Ջուղայ**, ի դուռն **Սբ. Ամենափրկիչ** վանից: Անմեղադիր լերուք խոշոր գոց. և սխալութե. սորա, զի կարն մեր այս չափ է և ոչ աւելի գիտեմ:

Արդ յերեսանկեալ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք ի սմա կարդալով և կամ օրինակելով, յիշեցիք ի մաքրափայլ աղօթս ձեր զբարեմիտ և երկիւղած այ. զխոհեմ զպարոն Մինասն, որ ստացաւ զսբ. աւետարանս ի հալալ վաստակոցն իւրոց յիշատակ իւրն և իւր ծնօղացն՝ զԳրիգորն և զԱխանէսն և զմայրն իւր՝ Շահումն և եղբայրքն իւր՝ Յովանէսն, Յակոբն, Արիստակէսն, և զքորքն իւր՝ Գուլջահանն, Հըռիփսիմէն:

Դրձլ. յիշեցէք ըզՄինասն և զկողակիցն իւր՝ Գոհարն, և զմիւս կողակիցն իւր՝ Սօլթանն և զորդիսն իւր՝ Մարտիրոսն, որ հանգեաւ առ Քս. և տր. ած. զարքայութին. իւր պարգևեսցէ և զմիւս որդիքն՝ Տէրոնն., Անտոնն և զդուստրն՝ Խանումն և Խանզատէն, Հըռիփսիմէն և հանգուցեալ դստերքն՝ Խանումն և Աղաջանն:





Կրկին անգամ յիշեցէք զՄինասն և զհօրեղբայրն իւր Բարխօրդարն և զդուստրն Խանաղէն և որ յիշէ յիշեալ լիցի ի միւսան գալըստեանն Քի. ամէն: Հայր մեր: Եւ որ ծախէ զայս աւետարանս պարտական լիցի Քի. դատաստանին Մինասին, զծախողն մասն ի Յուդայէ առցէ:

*Հիշատակարան հետագայի.*

Դառցեալ յիշեցէք զողորմած հոքի Սարքիսն լէն(՞) յուր որդիքն Յօվսէբն, Մօվսէսն և յուրանց հազուցեալ. մարն Մասբուրն և ածայսէր. քհանայք յիշեցէք յիշատակ Հօվսէբի կենդանի որդի Համբրցն. և Վարդանին դուստրն Մարքէրիտն, Մարիամն և Մօվսէսի կենդանի որդիքն յԱռաքելն, Սարքիսն: Օվ տէսնայք, յիշեցէք կողայկեցն սոցայ՝ Զարդարն և Դաքուին: Օվ սբազան. քհանք. յիշեցեք յիշեալ լիցիք առաջի ածեղեն. Քի., հար. մեր յերկին ամէն:



*Այլ.*

Դարձեալ յիշեցէք Մօսէսի որդի տր. Գալուստն և զդուսրն. իւր Հէռիբսիմէն, Կատարինէն, Բաղդագուլն և զկողակիցն իւր Մարգարիտն:

*Արձանագրություն կազմին ամրացված արծաթյա խաչին 11 տող.*

Յիշատ|ակ է | **Վանակա Սբ. Մին|ասայ** եկեղէցւոյ, | Եղիայ | Վարդ|անեա|նէ: | 1887, | յուլիսի | 11:













Ե. Ճառընտիր, վայր՝ Սբ. Հակոբ Ալփյան (Սբ. Ընձայաց լույս), Ագուլիս, թիվ՝ 1673, գրիչ՝ Մաթեոս քահանա.

*Հիշատակարան գրչության ժամանակի.*

Յիշատակարան է սուրբ գրոցս: Առք ամենասբ. երրորդութեն. հօր և որդոյ և յոգոյն սրբոյ: Որ ետ մեզ կարողութի. հասանել ի յետին գիծ, ոսկեփոր, որ այժմ կոչի ճառընտիր, ըստ մերում տկարութես. փոքր ի շատէ, ծաղկաքաղ արարի ի յածաբնակ. գեաւղս **Ագուլիս**: Առ ոտս սբ. տաճարիս առաքելյն, որ է **Յակօբ Ալփեանն**, որ այժմ ասի **Ընձայեաց լոյս**: Ի խնդրոյ պատուական Յօհանին, որ մեծաւ փափագանաւք և տարփալի ցանկութբ. ետ գրել զսա յիշատակ իւր և ծնօղաց իւրոց՝ Ամիրին, Մարիամին, և եղբաւրն՝ Յովանէսին, հանգուցեալյն ի Քս. և որդոյն՝ Բաղդասարին և թոռոյն՝ Փիլիպոսին, որ տարաժամ մահուամբ փոխեցաւ առ Քս. և թողեալ անմխիթար սուգ ծնողաց իւրոց: Եւ ես՝ ամենամեղ սխալամիտ գծողս Մաթէոս սուտ անուն քհ., տեսի ըզփափաք սորա և տկար անձամբ ի գրել սկսի: Եւ ընդ իմում կարի հանկ հանի և յաւարտ ածի շնորհօք ողորմութեն. Քի.: Եւ արդ գըրեցաւ սա ձեռամբ նոյն տխմար և անպիտան գրչի, յամի ՌՃԻԲ (1673) թըւականի մերումս տումարի, ի թգրութին. պարսից շահ Սուլէմանին, ի հայրապետութի. տն. Յակօբայ կթկսին., ի յառաջնորդութի. սբ. Թումայի առաքելյն տն. Պետրոս վարդապետին: Արդ որք հանդիպիք սըմա տեսութբ. կամ աւգտութբ. ինչ իւիք յիշեցէք զստացող սորա: Դարձել. յիշեցէք զբարեմիտ Յոհանն, որ ըստացաւ զսա հալալ ընչից իւրոց: Վս. որոյ յոյս և ապաւէն զած., արարեալ և ետ գրել զսա իւր զաւակ ընդ հոգոյ և յիշատակ բարի յեկեղեցի: Զմտաւ ածեալ զասացեալն ի մարգարէէն, որ աւէ թէ երանի որ ունի զաւակ ի Սիաւն և յիշատակի բարի յԵէմ.: Արդ այսմ երանութես. արժանացեալ բարեմիտ Յօհանն եւ ստացաւ զանառիկ մեծութիս. եւ զանկողոպտելի փարթամութիս.: Զայգիս վայելուչ և զդրախտս ածատունկս.: Զորթս ծաղկեալ և գծառս պտղալի: Զանուշահոտ ծաղկոցս և զվարթափթիթ բուրաստանս: Զսեղանս ամենալիր և զգինիս բարեհամ: Զուրախութիս. սրտից և զմխիթարութիս. վշտաց: Զխնդութիս. հոգոց և զսփոփիչս տրտմութեց.: Զփարատիչս ցաւոց և զառողջութիս. մարմնոց: Զգիրս ասեմ զածային., որ լցեալ է ամ. բարութբ.: Արդ ես՝ ի տրուփս ի կարգաւորացս. և յետինս ի գրչաց անւամբս Մաթէոս կոչիմ և թըմբրեալս ի մեղաց և անըննդոստ մրափած: Մեծաւ յաւժարութբ. գրեցի զսա յիշատակ Յոհանին և ծնողացն՝ Ամիրին, Մարիամին, ի կողակից Հազարվարդին և իւր դստերացն՝ Փարիխանին, Արզիխանին, Թիլիխանին, Մարիամին և զՂայիթխանին, հարց և եղբարց, կենդանեաց և հանգուցելոց և ամ. արեան մերձաւորացն մեծի և









փոքու. առհասարակ ամենեցուն ած. ողորմի ասացէք և ած. ձեզ ողորմեսցի յիւր միւս անգամ գալստեանն ամմէն: Դձվ. յիշեցէք մե - ղաւոր գրչակս զհայրն և զմայրն իմ, զեղբայրքն և զքորքն իմ և դուք յիշեալ լինիք ի յայ., և գրեցի զսա **Միջի քաղ** ըստ հովանեաւ **Սբ. Ընձայեաց լուսոյն** թվին ՌՃԻ և Բ (1673) ապրելի ամսոյն Ա (1):

*Հիշատակարան հետագայի.*

Սոյն ճառըս պատկանի **Սբ. Ընձայեաց Լոյս** ...խաչ եկեղեցոյն, 1855 ամի, Բ. Մ. Տր.-Միքայէլեանց:

*Այլ.*

Ի դուռն **Սրբոյն Յակոբ Ալփեանի** ընտրեալ առաքելոյն, Ատամ Թիլարենց., յուլիսի 10-ի գրվեցաւ 1867 ամի ի **յԱգուլիս**:

*Այլ.*

Յիշեցէք ըզմեղաւոր գրչացս գրոյս, ըզհարս. և ըզմայրս իմ եւ եղբայրքս իմ յիշեալ լիցիք առաջի այ., նըս գրեցի այս յիշատակս և աս ընտրի վրան Ատամ Ծատուրիս Թիլարեց., 1871 ամի փետրվա - րի 5-ին ի **յԱգուլիս**:

*Այլ.*

Դձվ. Յիշեայ մեղաւորին գրչաց, զհարս և զմայր իմ եւ եղբայրք և քույրք և յիշեալ լիցիք առաջի այ., գրեցի Ատամ Ծատուրի Թիլրեց.:

*Այլ.*

Ի գրոց **Սրբոյն Յակոբ Ալփեանի**՝ ընտրեալ առաքելոյն: Կ. Աբգրենց.:

*Այլ.*

Սոյն ոսկեփոր Յայսմաւուրք ձեռագիր գիրքն **Թեհրանի Ս. Աստուածածին** մայր եկեղեցուն նւիրեց պ. Միհրան Շահկալտեանը: 1943 թ. յունիսի 5-ին, **Թեհրան**: Միհրան Շահգալդեան:

*Գրչափորձություն.*

Դձլ. յիշեցէք մեղաւոր գրչակս, զհայրն և զմայրն իմ, զեղբայրքն և զքորքն իմ և դուք յիշեալ լինիք ի այ. և գրեցի զսա **Միջի թաղ** ընդ հովանեաւ **Սբ. Ընձայեաց Լուսոյն**, (Ռ-Ճ) և ԻԲ (1673) ապրիլի ամսոյն Ա (1):

































Ջ. Հայսմավուրք, վայր՝ Սբ. Ստեփանոս Նախավկա, Զորն Շամբա (Դարաշամբ), թիվ՝ 1686, գրիչ՝ Ստեփանոս Ջուղայեցի.

*Հիշատակարան գրչության ժամանակի.*

Ա[րդ] գրեցաւ [Ս]տեփ[անոս]: [Գ‑ր]եցաւ  զսբ. մ[ատե]անս, որ կոչի յայսմաւուր ի թվականիս հայոց ՌՃԼ և Ե (1686) ամին, ձեռամբ մեղաւոր և անարժան Ստեփանոս սարկաւագի **Ջուղայեցւոյ** ի յերկրին **Նախիջևանոյ** ի **Զորն Շամբայ** ի սբ. ուխտն **Սրբոյն Սըբոյն Ստեփաննոսի Նախավըկային** և առաջին մարտիրոսին, ի թագաւորութեն. տաճկաց և պարսից Շահ Սըլէյմանին և ի հայրապետութեն. տր. Եղիազարու սրբազան կթւղկոսի., հայոց մեծաց, որ և **Աստապատ** եհատ նետ իւրնց. վանիցն թէմ, զոր և սկիզբանն **Սբ. Նախավկայինն էր** թէմ և իշխանութեն. **Նախիջևանու** Մահմատ ըՌըզախանին: [Դարձեալ յիշեցէք զստացօղ սուրբ գըրոցս **զչօրսեցի** Մարկոսն՝ եւ իւր ծնօղսն՝ զտէր Գրիգորն եւ զՋանխաթունն, եւ կողակիցն իւր՝ զԴօնայն, եւ զորդին իւր՝ զՄակարն եւ եղբարքն՝ զտէր Արիստակէսն, Փանոսն Պետրոսն] և զՊօղոսն [և զքոյրն զՄա]րիամն և Ջօջպապն [զտէր Յովան]էսն, որ ետ գրել զսբ. [գիրքս] յիշատակ իւրն և ծնօղացն [յիշեցէք] և ած. ողորմի ասացէք, [որ եւ դուք ողոր]մութի. գաջիք ի Քէ., [որ է աւրհնեալ] յւտնս. ամէն:

Դրձլ. յիշեցէք զառաջնորդսն **Սբ. վանիցն Նախավկա[յին** Յակովբ եւ Պ]ետրոս վդպտքն., որ բզմ. *(պատռված)* [յօժ]արութբ. հոգաբ[արձու եղեն]., որ գրչի սորա և *(ջնջված)* [և վերակացութեամբ ետուն] գրել [յիշատակ Մարկոսին և իւր ծնողացն և զռճիկ գրչի սորա եւս ետուն ի յինքեանց, յիշեցէք և լի բերանօվ աստուած ողորմի ասացէք:

Դարձեալ յիշեցէք զմեղաւոր և անպիտան Ստեփանոս գրիչ սորա և իմ ծնօղքն՝ զՅովաննէս սարկաւագն եւ զԳօզալն, որ բազում նեղութեամբ և տառապանօք ի վերջ հասուցի զկնի երեք ամաց, յիշեցէք եւ աստուած ողորմի ասացէք, որ և դուք ողորմութիւն գտչիք ի Քրիստոսէ ի միւս անգամ գալստեանն իւրոյ ամէն:]

[Դարձեալ յերեսս անկեալ աղաչեմ զձեզ՝ օվ դասք սուրբ քահանայից և պաշտօնէից Քրիստոսի որք հանդիպիք սուրբ տառիս կ]արդալօվ կ[ամ] օրինակել[ով] [անմե]ղադիր լեր[րուք] զգրչիս ան[յարմար]ութեն., որ [և դ]ուք անմեղա[դիր լինիք] ի Քէ. ի գալըստեանն [իւրում, որ] է արհնեալ. յաւիտեն. ամէն: Հայր մեր, որ երկինս [ես]:

*Այլ (նմանօրինակ ևս 5 հիշատակարան).*

Որոց աղօթիւքն ողորմի Քս. ստացօղի սբ. գրոցս Մարկոսին և ծնօղացն՝ տէր Գրիգորին, Ջանխաթունին, և կողակցին՝ Դօնային, և որդւոյն՝ Մակարին, եղբրցն. քւերն և Ջօջպապ տր. Յովանիսին:



*Այլ (նմանօրինակ ևս 1 հիշատակարան).*

Որ ողորմի Քս. ստացօղի գրոցս ... *(ջնջված)* [Ջ]անխաթու *(ջնջված)* ... [կող]ակցին՝ Դօնային, և որդոյն՝ [Մակար]ին, և եղբարցն՝ տէր Արիստակիսին, Փանոսին, Պետրոսին և Պօ... *(ջնջված)* :

*Այլ.*

Տր. Յս. ողորմեա ստացօղի գրոցս Մարկոսին և ծնօղացն տէր Գրգրին. ... *(ջնջված)*, տէր Յվնսին. և ինձ մեղաւոր գրչիս կր.:

*Գրչության ժամանակի հիշատակարանի վրա սոսինձված թղթին.*

[Դրձ]լ. յիշեցեք ի Քս., ստացող սբ. մատենիս ըզիաւատարիմ և զիոգիշահ տանուտէրն Ածատու[րն]. և զեղբայրն իւր Մուրա[տն], որ բարի խորհուրդ արարին և գնեցին զսբ. գիրքս ի հալլ. վաստակոցն իւրց., բարի յիշատակ և անմահ որդի [և] բարէխօս յաւուրն ահ[եղ] ատենին Քի., իւրեանցն և ծնողացն Արղունին, կղկցն. Մրւաթին և ամ. արեան մերձաւորացն արանց և կանաց, ծերոց և տղայոց և ամ. չա...*(ջնջված)*ք հասակի զյտնս. ամէն: *(ջնջված)* ... փխեցեալ. որդցն.՝ [Յովանէ]սին, Յովսէփին, Եղիային, [Նա]ազլուին, եղբօրն՝ Մուրատին, կղկցն.՝ Ոսկեկին, որդոյն՝ Մանուկին, դստց.՝ Նռնեկին, Արղունին, կղկցն.՝ Մրութաին, քւերցն՝ Բանաւշին, Խալաֆին, Մարգրտին, Նարգզին, դարձեալ ած. ողորմի Ածատուրին. մեծ պապուն՝ Մէքայելին [և կղ]կցն. Յամանին, որդոցն և [թո]ռանցն, որ փոխեցեալ են ի Քս., Թառլանին, Նուբարին, Գուլանին, Մարինամին, Նէֆին, Մարթ[ային Շ]ողկէին որդոյն *(ջնջված)* ...: Դրձլ. ած. ողորմի












Ածատուրին., եղբօրն՝ Մուրա[տին] և ամ. արեան մեր[ձաւորա]ցն առհասա[րակ ամենե]ուն ամէն:

*Այլ (նմանօրինակ ևս 30 հիշատակարան).*

Որ ողորմի ըստացօղի սբ. գրոցս Ածատուրին. կղկցն.՝ Նսէֆին, Գույարին, որդոյն՝ Թամրազին, կղկցն.՝ Մարգարտին, եղբօրն Մուրատին, կղկցն.՝ Ոսկեկին, ծնողացն՝ Արղունին, Մրուաթին կրդցդ.:







*Այլ (նմանօրինակ ևս 26 հիշատակարան).*

Ողորմեա Քս.ած. ընտացօղի սբ. գրոցս,Ածատուրին. կղկցն.՝ Նսէֆին, Գօյարին, որդոյն՝ Թամրազին, կղկցն.՝ Մարգրտին, եղբօրն՝ Մուրատին, կղկցն.՝ Ոսկեկին, որդոյ. Պետրոսին, կր.:

*Այլ (նմանօրինակ ևս 25 հիշատակարան).*

Ողորմեա Քս. ած. ընտացօղի գրոցս Ածատուրին. կղկցն.՝ Նսէֆին, Գօյարին, որդոյն՝ Թամրազին, կղկցն.՝ Մարգրտին, եղբօրն՝ Մուրատին, կղկցն.՝ Ոսկեկին, ծնօղացն՝ Արղունին, քւերցն՝ Խալաֆին, Բանաւշին, Նարգզին, Մրգրտին. կր.:

*Այլ.*

Բարեխօսութբն. սրբոց քոյ ողորմեա Քս. ընտացօղի սբ. գրոցս Ածատուրին., կղկցն.՝ Նսէֆին, Գօյարին, որդոյն՝ Թամրազին, եղբօրն՝ Մուրատին, կղկցն.՝ Ոսկեկին, քւերն՝ Մարտին, կր.:

*Այլ .*

Որոց բարեխօսութբն. ողորմի Քս. ստացօղի սբ. տառիս Ածատուրին. կղկցն.՝ Նսէֆին, Գօյարին, որդոյն՝ Թամրազին, կղկցուն.՝ Մարգրտին, եղբօրն՝ Մուրատին, կղկցն.՝ Ոսկեկին, որդոյն՝ Մանուկին, ծնողացն՝ Արղունին, Մրւաթին:

*Այլ.*

Տր. Յս. ողորմեա ընտացօղի գրոցս՝ Ածատուրին., կղկցն.՝ Նսէֆին, եղբօրն՝ Մուրատին, կղկցն.՝ Ոսկեկին, ծնողին՝ Արղունին, Մրւաթին, կր.: Մանուկին, կղկն.՝ Ղումաշին:

*Այլ.*

Որ ողորմի Քս. ընտացօղի սբ. գրոցս Ածատուրին. կղկցն.՝ Նսէֆին, Գօյարին, որդոյն՝ Թամրազին, կղկցն.՝ Մարգրտին, եղբօրն՝ Մուրատին, կղկցն.՝ Ոսկեկին, և ամ. ազգականացն կրդ.:

*Ծանոթ.* հիշատակարանների զգալի մասը հրատարակվել է: Տե՛ս Ցուցակ հայերէն ձեռագրաց Թեհրանի, կզմ. **Հ. Աճառեան**, 1936, Վիեննա, էջ 7-8:



*Գրչափործություն.*

Ով որ հանդիպեսցի յայս գրուածոյս, ինձ ողորմի ասացէ: Ած.: Յամի փրկչին 1816 և hայոց 1265: Ես՝ Զաքարիա եպսս., եկի ի գիւղս յայս **Զօռ** կրկին նուիրակ **սբյ. Էջմիածնի**, ոպս. յա[ռաջին անգամն] նոյնպս. և [այժմ եռուն ինձ Թ թւմն. ած. չէն պահեսցէ: Տր. Յարութիւն քհնյ.]:



*Այլ.*

Յուլիսին՝ 1844, տրուք ի քահանայից՝ տր. Մարգար Ստեփան - նոս Յովա[ննէ]սեան Քէշիշովից(՞), կարդալով այսմաւրս. մեղայ - պարտիս մեղաց թողութիւն խնդրէցէք այ., տր. Քսն. թողցէ զհանցանս ձեր ապաշխարուք. ձերով:

*Այլ.*

Ի **Թէհրան**, 1890 մէկ յունվար, վիճակաւոր ի **Սբ. Թադէոս** եկեղ.: Ես՝ տէր Խաղ Ե. Աբգարեան, իմ անունս յիշէցի այս գրումս և օվ որ մին բերան կարդայ, յիշի և ինքն յիշհեալ լինի առաջի աստուծոյ:

*Ծանոթ.* **Աճառյանի** մոտ *Զօռ*-ի փոխարեն՝ *չօռ*:







Է. Խորհրդատետր, վայրը և թիվը՝ անհայտ, ԺԷ դ., գրիչներ՝ Մելքոն սարկավագ և Աղազար.

*Հիշատակարան գրչության ժամանակի.*

Ով պատարագող առաջի զենման անմահ գառինդ յիշեա զստացող սորա զհաւատարիմ և բարեմիտ զպարոն Ոհանն, որ ետ գրել զսա յիշատակ իւրն և ծնողացն՝ հնգւցլ. խօջա Թորոսին և Մրգրտին. և հորեղբօրն իւր՝ խօջա Մանուկին և սորա որդոյն՝ պարոն Գորքուն, ամէն: Դձլ. յիշել աղաչեմ ըզ. պարոն Ոհանն և կողակիցն իւր զԳուլզատէն և հանգուցեալ որդին ըզԱծատուրն. ած. փոխարեն ...ի ասացէք ամէն: Դձլ. յիշել զպարոն Ոհանն և եղբայրն իւր զՅաբուիին.: Դձլ. յիշեա զբարեաց պատճառ Ածապովն., որ եղև բարի պատճառ գրոցս:

*Այլ.*

Դրձլ. յիշեցէք մեղաւոր և անարժան Աղազարս, և փոքըր աշխատեցանք ի սբ. գրոյս, ով զիս յիշեսցէ, յինքն յիշել. լիցի առաջի անմահ գառին աստուծոյ, փառք յաւիտեանս:























*Այլ.*

Ով պատարագիչ, առաջի զենման անմահ գառիդ յիշեա զսարկաւագ Մէլքոնն, և դուք վարձատրիք ի Քս. է, որ է օհլ. յիտ. ամէն հայր:

*Այլ.*

Ով պատարագիչ, յիշեա առ պատարագն Քս. զյՈհանն և ընկողակցին իւր զԳուլզատէն և զինգւցլ. որդին՝ Ածատուրն.:

*Այլ.*

Ով պատարագող, յիշեա ի Քս. զստացող սորա զպարոն Ոհանն և հարազատ եղբարքն իւր զպարոն Յարութին. և:

*Այլ.*

Ով պատարագիչ, յշեա. ի տր. զստացող սորա զպարոն Ոհանն:

*Այլ.*

[Ո]հանն և զծնօղսն՝ հնգւցլ. զխօջա Թորոսն և Մարգարիտն:

*Հիշատակարան հետագայի.*

Ամէն: Բարի է խոստովան լինիլ տն. և սաղմոս ասել անուան քում բարձրեալ: Պատմել առաւօտայց:

*Այլ.*

Ես՝ տր. Սարգիսս, որ օրնէվեցայ թվն. ՌՃԾԴ (1705):

*Այլ.*

Յիշէ նջյլն.:

Ը. Քարոզգիրք, վայրը և գրիչը՝ անհայտ, թիվ՝ 1789.
*Հիշատակարան գրչության ժամանակի.*

Ես՝ **մեժնգերցի** հանգուցել. Ստեփանի որդի Գասպար վրդպս.: Ես՝ հանգուցել. Երեմիա պետին եղբօրորդի Զաքարիայս, առի զայս Քարոզգիրքս արդեամբ իմով յումեմնէ քահանայէ՝ ի վայելումն անձին իմոյ և հրզտ. եղբարց: Ի ՌՄԼԸ (1789), ի սեպ. ԺԵ (15), ի սբ. աթոռս **Թօմի**. ...էն:
*Կնքադրոշմ.*

Գասպար վդպտ. 1241 (1792):
*Այլ (փակագիր)*

Ք. ծ. Գասպար վարդապետ, 1246 (1797):
*Արձանագրություն կաշվե կազմին՝ 2 տող.*

Յս. Քսի. ծռ. | Ա. Բարսեղ:



















Թ. Հիսուս որդի (հեղ.՝ Ներսես Շնորհալի), վայրը՝ անհայտ, թիվ՝ 1790, գրիչ՝ տեր Ովանես:

*Հիշատակարան գրչության ժամանակի.*

Ես՝ մեղայոր և անարժան տ(է)ր Ովանէս, գրեցի թւին ՌՄԼԹ (1790)-ումն վ(ա)սն գրչայ:

*Այլ.*

Ես՝ մեղայոր և անարժան ապիկա., ծայռայ տ(է)ր Ո[վանէ]ս, գրեցիցե թւին ՌՄԼԹ (1790)-ումս գրեցի:

*Այլ.*

Ես՝ մեղայոր և անարժան տ(է)ր Ովնս.:

*Գրչափորձություն.*

Խանու(մ) մօրէ ծընաւ թին. 18Խ (1840)-ին: Յարութն. մօրէ ծընաւ թին. 18ԽԱ (1841)-ին: Գալուստն մօրէ ծընաւ թն. 18ԽԳ (1843)-ին:

*Այլ.*

Յարութիւն Պօղոսի որդին, որ վախջանի թիւն 1894-ին:

*Այլ.*

Թումաս, որ մօրէ ծընաւ, էր թիւն 1903:

*Այլ.*

Աղէքսանդր Մարգարեանս աշակերտ էի, թիւն 1906 գրեցի:

*Այլ.*

Դաւիթ Մարգարեան, 1910 թիւ:

*Այլ.*

Թումաս, որ գնաց ըջբարի (պարտադիր զինվորական ծառայություն), 1925 թիւ, նոյեմբերի 15:

*Այլ.*

Յակոբը, որ մօրէ ծնաւ, էր թիւն 1932 սե.:









Ժ. Ավետարան, վայրը և թիվը՝ անհայտ, ԺԷ դ., գրիչ՝ Սիմեոն աբեղա.

*Հիշատակարան գրչության ժամանակի.*

Յայս հրաշափառ մեծի տաւնիս երանի ընթերցողիդ, որ հանդիպիս լուսապայծառ ճրագալուցիս ի սբ. կենսատու յարութենիս., յորժամ մաքուր յայսաւրս հասանիս և աւուրս շնորհաց արժանաւորիս արժանի արա յիշման զեղկելի և զփցուն գրաւղ գրիս, աղաչեմ զամենեսեան, սրտիմ տաւք յիշել յաղաւթս, որք հանդիպիք այսմ տառիս զՍիմէոն սուտանուն աբեղա, որ իմով յաւժարութբ. աշխատեցա և գրեցի յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց զայս գիրքս, թէպէտ և անարհեստ էի գրչութե. արուեստի:

*Այլ.*

Ով սբ. ընթերցողք, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զԿարապէտ աբեղայս, մանաւանդ ի ժամ սբ. պատարագիս:

























ԺԱ. Գիրք հաղագս մոլության, վայրը, թիվը և գրիչը՝ անհայտ, ԺԷ-ԺԸ դդ.

*Հիշատակարան հետագայի.*

Թվն. 1831, յունիսի 6, օրն շաբաթ, մտաինք **Սբ. ըՍտէփաննոս Նախավկայի** վանքն ուխտ և երկրպագութի. արեցինք և անտ այս մոլութե. գիրքն Սարգիս խաչագիր ծայրագուն վրդապն. շնորհեց մեզոյ տր. Գաբրիէլիս:







ԺԲ. Հաղագս ստեղծման էիցս, վայրը, թիվը և գրիչը՝ անհայտ, ԺԷ-ԺԸ դդ.

*Հիշատակարան հետագայի.*

Ի վանս **Ս. Թովմայի առաքէլոյն Գողթնեաց**:
































ԺԳ. Մեկնություն Հովհաննու ավետարանի՞ (հեղ.՝ Անանիա վարդապետ), վայրը, թիվը և գրիչը՝ անհայտ, ԺԸ դ.

*Գրչափորձություն.*

Մարգար աբ.: Վսն. գրչափործուեն. հմր. գրեցի: Գրեցաւ յամի տն. հազար ութն հարուր քսան յիրեք (1823), մայիսի քսան չոր. և այլն:







ԺԴ. Սաղմոս, վայրը, թիվը և գրիչը՝ անհայտ, ԺԷ դ.









ԺԵ. Աստվածաշունչ, վայրը, թիվը և գրիչը՝ անհայտ, ԺԷ դ.

















ԺՁ. Գիրք սրբոյն Մաշտոցա վարդապետի, վայրը, թիվը և գրիչը՝ անհայտ, ԺԷ-ԺԸ դդ.









ԺԷ. Գանձասար, վայրը, թիվը և գիրչը՝ անհայտ, ԺԷ-ԺԸ դդ.















ԺԸ. Ավետարան, վայրը, թիվը և գրիչը՝ անհայտ, ԺԷ-ԺԸ դդ.















# ՏՊԱԳԻՐ ԳՐՔԵՐ

Թանգարանում 2017 թ. պահպանվում էին ԺԷ-Ի դարերի տպագիր բազմաթիվ գրքեր: Դրանց որոշ մասն ունի ձեռագիր տարաբնույթ հիշատակություններ և կնքադրոշմներ: Ստորև ներկայացնում ենք 37 միավոր:

Ա. Աւետարան, տպագրության վայրը և թիվը՝ անհայտ, ԺԷ դ.

*Կնքադրոշմ.*

Յս. Քս. ՌՃԽ (1691): Շնորհօքն այ. Նահապետ կթղկս. Ամ. Հայոց:

*Ծանոթ.* Նահապետ Ա Ուռհայեցի (ծ.թ. անհայտ-1705, Էջմիածին): Ամենայն հայոց կաթողիկոս 1691 թ.-ից:







Բ. Աւետարան, տպագրության վայրը և թիվը՝ անհայտ, ԺԷ-ԺԸ դդ.

*Հիշատակություն.*

Արդ երես անկեալ աղաչեմ զձեզ ի դասս լոյս երամ քինյից. և սրկւզց., յորժամ հանդիպիք այս սբ. աւետարանս. կրդլով. կամ օրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զբարեմիտ և զհեզահոգի տիրացու Ղարիպն և զհայրն իւր Ամիրն և զմայրն Մարիամն, որ և ազատեաց և գնեաց այս սբ. աւետարանս ի արդար վաստակոց իւրոց, յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնօղացն և ամ. արեան մերձաւորցն. ամէն, ի թվ. ՌՃՀԳ (1724), գրեցւ. ձեռամբն մեղապարտ պոռնիկ տր. Ստեփաննոսին, յիշեցէք ի Քս., ամէն:





*Այլ.*

Արդ երիս անկեալ աղաչեմ զձեզ ի դասս լոյս երամ քինյից. և սարկւգաց, յորժամ հանդիպիք այս սբ. աւետարանս. կրդլով. կամ օրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զբարեմիտ և զհեզահոգի այրի կին Մըրվաթին, իւր հօր Բարսեղին, իւր հալալ կալիմաստ ժողովեց, տվեց ամիցս իւր ծնօղացն յիշտակ. դվեց մեղսայպարտ միսի. տր. Մարտիոսին., յիշեցէք ած. ողորի. ասացէք Մըրվարթին ամէն: Թվին ՌՄՂ (1841)-ին:

*Այլ.*

Յի. Քի. ծառայ Զօրաբաբ եւ տր. Յարութ.: Ես խնդիրք ունիմ, այս սբ. աւետարանիցն բարի ճանապարհ տայ ինձի, որ այս երգըրիցն փրկըւեմ, որ ես շատ փափագ ունիմ, շատ տեղարանք ուղտ անելու բարերարին: Ած. յաջողեսցէ, ամէն:

Գ. Աւետարան, տպագրության վայրը և թիվը՝ անհայտ, ԺԷ-ԺԸ դդ.

*Հիշատակություն.*

Գրէցաւ գիրըս հաճ. Գասպարի որդի տիրացու Պետրոսը: Թվական հացս. ՌճՂԵ (1746) մարտի ԺԸ (18)-ին:

*Այլ.*

Գիրըս հաճ. Ենկեր(՞) ... *(միտումնավոր ջնջված)* թվին ՌՄԽԴ (1795), 1210, 1795:



Դ. Աւետարան, տպագրության վայրը և թիվը՝ անհայտ, ԺԸ դ.

*Հիշատակություն.*

Ես՝ **ջուղայեցի** լուսայհոգի Քալանթար Սարգսի պստիկ որդի Սիմոնէս, գրեցի ի սբ. գրուս, որ ով օր կարդայ, իմ հէր Սարգսին և իմ մէր Թագուէ և իմ քուր Մէրխաթունին և իմ ախբէր տիրացու Թաթէոսին յիշէ, յինքն յիշել. լինի առաջի Յի. Քի. ամէն, գրվեցաւ թվի փոքր 164 (1779), հմիրյ. ԺԲ (նոյեմբեր 27)-ումն:

*Այլ.*

Ես՝ լուսայ հոգի Քլթր. Սարգսի պստիկ որդի Սիմոնէս, գրեցի, ով օր կարդայ, իմ հայր Սարգսին և իմ մայր Թագուէ, իմ քուր Մէրխաթունին և իմ ախբէր տիրացու Թաթէոսին յիշի, յինքն յիշել. լինի առաջի Յի. Քի. ամէն, գրվեցաւ թվի փոքր 164 (1779), համիրայ ԺԲ (նոյեմբեր 27)-ումն:



Ե. Աւետարան, Կոստանդինուպօլիս, 1710 թ.

*Հիշատակություն.*

Նուաստս՝ Յի. Քի. ծոյ. Աւետի որդի Գրիգորս, գրեցի, ով օր կարդայ, մին բերան յիշի եկմ. ողոմիայ և հինքն յիշեալ լինի առջի. այ. ամէն և ամէնն: Թիվն փոքր ԱճՀԵ (1790) շմս. Ի (ապրիլի 9):

*Այլ.*

... *(միտումնավոր ջնջված)* **Ղազբին**, թվ. 1853 մասի. 8-ին:

*Այլ.*

... *(միտումնավոր ջնջված)* գրեանցի **Ղազբին**, ի 1854 6 յունվարի:





Զ. Շարական, տպագրության վայրը և թիվը՝ անհայտ, ԺԸ-ԺԹ դդ.

*Հիշատակություն.*

Ես՝ Յարութին.: Ես մէղայոր՝ անարժան տր. Պօղօսէս, այս շարականը առայ, թվին ՌՄՁ (1831)-ումն դեգտեմբերի ԻԵ (25): Լուսաւորեալ քաղա.:

*Այլ.*

Ես՝ մէղաւոր անարժան տր. Պօղօսէս, առայ այս շարականըս թվին հազար ու 831 դեգտերի. ԻԵ(25)-ումն:

*Այլ.*

Յիշէա. ինձ՝ շատ մէղաւորս տէր Ղազար Նէրսիսեանիս:

*Այլ.*

15 դեկ. 1949 **Թէհրան**, գրեց Ղազար Նէրսիսեանց:





Է. Պատասխանիք առ անիրաւ զրպարտութիւնս իմաստակի ուրումն ընդդէմ նոր քերականութեանն գրաբառ լեզուիս հայոց, Մոսկով, 1828 թ., հեղ.՝ Թ. Խատամեան և Մ. Սալլանթեանց.

*Հիշատակություն.*

Ի Հ. Միքայէլ վարդպէ. հայոց Սալլանդեանց ընծայ ուսումնափայլ Մեսրոպայ Դ. Թաղիատենց. ի 1832-2-6, ի քաղաքէն **Մոսկովայ**:

*Այլ.*

Թէոդորոս Խատամեան **Ղրիմեցի**:

*Այլ.*

Յիշատակ Յ. Մուրատեանի՝ աշակերտ՝ Հ. վարժրնի.:

*Ծանոթ.* Միքայել Սալլանթյանց (1782, Կ. Պոլիս-1851, Մոսկվա). լեզվաբան, մանկավարժ, կաթողիկե եկեղեցական գործիչ:

Մեսրոպ Դավթի Թաղիադյան (1803, Ձորագյուղ-1858, Շիրազ). գրող, մանկավարժ և հրապարակախոս:



Ը. Գործք առաքելոց, Կոստանդնուպոլիս, 1823 թ.

*Կնքադրոշմ.*

Ք. ծ. Գրիգոր Սիմօնեան, 1834:





*Հիշատակություն.*

Յովհաննէս Նազարեանց, նուէր առ Հայկազեան վարժարանի գրատան, ի **Թէհրան** 5 փետրվար 1875:

*Այլ.*

Պրն. Արմենակ՝ Հ. վարժարան:

Թ. Աստուածաշունչ, Վենէտիկ, 1805 թ.

*Հիշատակություն.*

Գնեցի **Կլկթյ**. ի պլրն. Յովհաննէս Ավտլեան.: 1843 նովէմբր 5-ին:

*Ծանոթ.* Հովհաննես Ավտալյան (1803, Շիրազ-11.07.1870, Կալկաթա). մանկավարժ, թարգմանիչ:





Ժ. Աստուածաշունչ, տպագրության վայրը և թիվը՝ անհայտ, ԺԸ դ.

*Հիշատակություն.*

Թիւն 1846 ամի ի **Չանաղչի** բնակ գուղըն, յուլիսի 26-ին օրըն շաբաթ, ած. Մէլիքսէթին պարքեւեց մեզի որդի: Գրեցի, որ եմ ես՝ Օվագիմ Տր.-Յովաննէսեան:

*Այլ.*

Շմայոնին, որ ած. պարքեւեց ի գուղըն **Չանաղչի**, օրըն էր հինգշաբաթ, թիւն էր 1849 ամի յունիսի 5-ին: Նվաստ Օվակիմ Տր.-Յովհաննէսեան:

*Այլ.*

1882 ամի յունվար 12-սին Երեմային ած. պարքեւեց:

*Այլ.*

1886 ամի յունվարի 5-ին ած. Ասանէթին տվաւ:

*Այլ.*

1888 ամի ապելի. 2-սին Հայկին ած. պարքեւեց:

*Այլ.*

1896-ին մախս. 10-ին Նասրատին շահն աշխարգից գնաց, յունիսի վըջին. տղն. կարգուվեցաւ Մուզաֆարտին շահ:

*Ծանոթ.* Նասր Էդ Դին (1831, Թավրիզ-1896, Թեհրան). Իրանի շահ 1848 թ.-ից Ղաջարական դինաստիայից:

Մուզաֆֆար Էդ Դին (1853, Թավրիզ-1907, Թեհրան). Իրանի շահ 1896 թ.-ից Ղաջարական դինաստիայից:





ԺԱ. Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տն. 1784, հ. Ա, Վենէտիկ, 1786 թ., հեղ.՝ Միքայէլ Չամչեանց.

*Հիշատակություն.*

Նուէր ի յանկեղծ բարեկամութեն. սիրոյ ի Մկրտիչ Աբրահամէս առ անկեղծ բարեկամն իմ պրն. Աբրահամ Թաղէոսեն., ի **Կալկաթա**, 22 յուլիսի 1849:

ԺԲ. Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տն. 1784, հ. Բ, Վենէտիկ, 1785 թ., հեղ.՝ Միքայէլ Չամչեանց.

*Հիշատակություն.*

Նուէր ի անկեղծ բարեկամութեան ի Մկրտիչ Աբրահամէս առ անկեղծ բարեկամն իմ պրն. Աբրահամ Թաղէոսին, ի **Կալկաթա** 22 յուլիսի 1849:

ԺԳ. Անհայտ գիրք, տպագրության վայրը և թիվը՝ անհայտ, ԺԹ դ.

*Հիշատակություն.*

Հ.Ե.Ե. մի արհին(՞), ի **Կալկաթա**, ջանէր 1 1850:

*Այլ.*

Հ.Ե.Ե. մի արհին(՞), ի **Կալկաթա**, 1 ջանէր 1850:

ԺԴ. Սաղմոս Դաւթի, Կալկաթա, 1847 թ.

*Կնքադրոշմ.*

Պ(աղտասար) Չ(ալիեանց), 1848:



*Հիշատակություն.*

Ի 1851 թիւ մայիս 22-ին, Պաղտասար Չալիեանց:

*Այլ.*

Յիշատակ հանգցել. տէր Սրապիոն Քընյեան՝ Հ. վրժրն.:

ԺԵ. Աւետարան, Մոսկուա, 1849 թ.

*Հիշատակություն.*

Принадлежит П. Р. Мелик-Минасянцу 1852, 20 Марта.

*Թարգ.* Պատկանում է Պ. Ռ. Մելիք-Մինասյանցին, 1852 մարտի 20 (ընթերցումը և թարգմանությունը՝ Լ. Ավետիսյանի):

*Այլ.*

Յիշատակ հանգցել. Ստեփան Խան Մ. Մինասեան՝ Հ. վրժրն.:

*Այլ.*

**Թէհրանի Սբ. Ածին.** եկեղեցին նուիրում է այս սբ. խղաբերից աւետարանը, **Ազնա** գիւղի, իւր քոյր եկեղեցուն: **Թէհրանի** հայոց եկեղ. վարչութիւն: **Թէհրան** 6 մայիս 1937: Ա. Հ. Յարութիւն: Վահան քահ. Թորքարլեան:

*Կնքադրոշմ.*

Հայոց եկեղեցական վարչութիւն **Թէհրան**, 1918:

*Այլ.*

**Ազնայի** Ս. Աստուածածին եկեղեցական վարչութիւն:

ԺԶ. Գիրք սաղմոսաց, տպագրության վայրը և թիվը՝ անհայտ, ԺԹ դ.

*Հիշատակություն.*

Ես՝ անարժան տէր Պետրոս: Ես՝ անարժան տր. Պետրոս Սիմէօնեն., ամի տն. 1854-ին գրեցի:

*Այլ.*

Տր. Պետրոսի կողակից Փէրիխան, որ հանգեաւ առ Քս. ած., թվն. ՌՅԻԵ (1876), ամի տն. 1876-ին:

*Այլ.*

Ես՝ տէր Գրիգորի որտի Քոչարս, որ կինաց այս 1891-ին, ով որ յիշի, ինքն յիշեալ լիցի առաջէ անմահ գաիին ածյ.:

*Այլ.*

Ես՝ խոնարհ ծառայ Այվազ Յովսէփեան:

*Այլ.*

Մինասի ծնունդն էր 1902 նոյէբեր. 30-ին:

*Այլ.*

Սարգիս Կիրակոսեան, գրեցի 1908:

*Այլ.*

Միքայէլ տր. Գրիգոր Յ. Տր.-Պետրոսեան, ի **Սանգաֆիդ**, 1912:

*Այլ.*

Ենօզի ծնունդն էր, 1941 յունուար 18:





ԺԷ. Գիրք աղօթից սբյն. Գրիգորի Նարեկացւոյ հոգեկիր հռետորի, Կոստանդինուպօլիս, 1807 թ.

*Հիշատակություն.*

Է: Մեծապատիւ և պատվելի պրն. Օհանէս Կարապետեան, յայտ լիցի ձեր հրամանոյ իմանալու, Քայ. պարհիխսութինով., որ է - կամ վարժարայն կարթալով, որ սուվեմ., որ իմանամ: Ի 1854 փըտրվարի 6-ին, խոնար ծառայ Կոռիւն Յովհաննէսեան. գուրէմ, որ սովրիմ.: Ած.-իմ:

*Այլ.*

1856 այս է յուլիսի 14-ին:







ԺԸ. Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տն. 1784, h. Գ, Վենէտիկ, 1786 թ., հեղ.՝ Միքայէլ Չամչեանց.

*Հիշատակություն.*

Տամք զայս մատեան պատմութեն. հայոց, Գալուսդին Թորոսեան աշխատաւորին **Սբյ. Վանիս**, զի որովհետև երթամք մեք ի **Թէհրան**, առ իւր ունելով կարօղ լիցի ընթեռնուլ: Եթէ յընթացս ճանապարհորդութեն. մերոյ դիպեսցի մեզ մահ, զոր տէր մի արասցէ, ընծայ լիցի այս մատեան յիշեալ Գալուսդին, իսկ թէ վերադարցանք ողջամբ, յետս ստանձնելով զայն ի մերում հարկաւորութե.: Թադդէոս եպս. ի **Ջուղայ** 1854 ի 23 յունվարի:

*Ծանոթ.* Թադեոս արք. Բեկնազարյանը 1851-1863 թթ. եղել է Իրանա-Հնդկաստանի թեմի առաջնորդ (նստավայրը՝ Նոր Ջուղա):



ԺԹ. Գիրք վիպասանութե., որ կոչի հոմանունակի Ագաթանգեղոս, Կոստանդինուպօլիս, 1709 թ.

*Հիշատակություն.*

1858 ամի յունվար 17: Արժանապատիւ և իմ սիրէլի եղպայր Յարութիւն Պարսեղեան, հայտ լիցի եղպայրութե. եթէ կատս.:

*Այլ.*

1859, 5, 13: ...: Հայրապետ Պարսեղեն. ի գիւղն **Մուժամբար**:

*Այլ.*

Տուվեցի ես՝ Հայրապետ Մէլիք-Մնացականեանս, այս գիրք տիացու. Յակոբին, կազմաւ հախ լինե ձեզ, որ և Յովհաննէս Տր.-Սարգսեանիս հետն ըսգսանք ընթերնուլ:

*Այլ.*

Արժանապատի. հօրեղբայր իմ պարուն Հայրապետ Մէլիք-Մնացականեան, եթէ կամիս զմեր որպիսուի. հարցնել, փառք այ. մինչև այս գիրս գրեալ թարիղին (թվականին), ողջ եմք և առողջ եմք, բայց ձերդ պատուական տեսուն կարօտ եմք:

*Այլ.*

Ավետիս, տր. Գափրիէլ, տր. Միքաէլ: 1867-1709=158:

Ի. Ծիսարան, որ կոչի Մաշտոց, Շուշի, 1858 թ.

*Հիշատակություն.*

Այս գիրքը առեցի **Տփխիսում** 1878 ամի, Սարգիս քահանայ Շահեան:

*Կնքադրոշմ.*

Ահարօն քհն. Տր.-Ահարօնեանց, 1865:

*Արձանագրություն կազմին ամրացված արծաթյա խաչին, 4 տող.*

Յ(ի)շ(ատակ) | Կամի.(՞) | գրեց.(՞): | 1892:





ԻԱ. Սրբոյ հօրն մերոյ Ներսէսի Լամբրոնացւոյ արհիեպիսկոպոսի Տարսոնի Կիլիկեցւոց ատենաբանութիւն եւ ճառք ընտիրք ի համբարձումն Քսի. և ի գալուստ հոգւոյն սբյ., Վենէտիկ, 1787 թ.

*Հիշատակություն.*

1867 ի 17 օգոս. ի պատճառ քօլէրայ հիւանդութ. գնցք. ի **Վնաք**. գեօղն և անդ անցուցաք աւուր իբրև 25 և ի 12 սեպ. նոյն թոյ. դարձաք կրկին ի **Թէյհրան**: Ս. Ո. Խ. Ովեան(՞):

*Այլ.*

1868 ի 10 օգոս. ավրտվեցաւ. համալսարանն մեր ի պատճառ քօլէրայ հիւանդութ. և այնուէ. մնացաք մինչ ի 20 սեպ., աւր իբրև 41:

*Այլ.*

Յիշատակ Հրաչեայ Մինասեանի՝ Հ. վարժարան:

ԻԲ. Մաշտոց, տպագրության վայրը և թիվը՝ անհայտ, ԺԹ դ.

*Հիշատակություն.*

**Սբ. Էջմիածնին**, կառուցուել է 303 թուին, հայոց գրերի գիւտն եղայ սբ. Մեսրովպ վարդապետի ձեռքով 401 թուին, հայերէն տառրով. առաջին տպագրութիւնն եղաւ **Վէնէտիկ** քաղաքում Աբ - գար Աւտոկիացու ձեռքով 1565 թուականին, մեր տոմարի վերանորոգութիւնն կատարուեցաւ Մովսէս կաթուղիկոսի ձեռքով 551 թուին, **Տփխիսում** Նեսիսեան. դպրանոցն հիմնեց Ներսէս 5-երրորդ կաթղակոսն. 1825 թուին, երբ դեռեւս արքեպիսկոպոս էր, **Սբ. Էջմիածնի** ճեմարանի հիմնադիրն եղաւ 1814 թ. Գէորգ չորրորդ կաթղակոսն., որ վախճանեցաւ 1882 թուին դեկտեմբերի 6-ին, ճաշից յետոյ 1 ժամ և 55 րոպէին: Մակար Առաջին Ամենայն Հայոց կաթղակոսը. հայրապետական գահըն ժառանգեց 1885 թուականին և սբ. օծումն ընդունեց նոյն ամի 10-ն նոեմբերի.:

ԻԳ. Աւետարան, տպագրության վայրը և թիվը՝ անհայտ, ԺԹ դ.

*Հիշատակություն.*

Յի 1883 ամի, հուլիս 26: Այս գիրքը կը պատկանի Ստեփան Յա - րութիւնեանին:

Կազմի հետևում.

1883 ամի օգոստոսի 2-ին եղաւ մի երեխայ, անունը դրինք Վահակ:

1886 ամի նոյեմբեր 9-ին եղաւ մի երեխայ, նոյեմբերի 16-ին ա - նունը դրինք Մարի:

ԻԴ. Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տն. 1784, հ. Ա, Վենետիկ, 1784 թ., հեղ.՝ Միքայէլ Չամչեանց.

*Հիշատակություն.*

Առ ի նորին բարձր արժանապատիւ տն. տն. Գրիգորիսի արք. եպիսկոպոսապետին մերոց և առաքելաշաւիղ առաջնորդին **Հնդկաստանու** և **Պարսկաստանու** ի **Նոր Ամենափրկչին Սբ. Վանս**:

*Այլ.*

1898 թվին շատ սաստիկ ձուն էկաւ ձըմեռն՝ յունվարի 10: Ձուն ... էկաւ 6 օր շատ զարար (վնաս) տվեց *(պատռված)* ...աբատիկ վ... *(պատռված)*: 19 յունվարին սաստիկ ձին. եկւ.:

*Այլ.*

Սամսոնի հարսանիք 1888: Ծնաւ Եղնազարն 1892, Եսային 1895, Սալբին 1899, ...վալն 1903, Արեւիատ 1906 ծնաւ, Հայկանուշ ծնաւ 1908, ... 1910:



*Այլ.*

Ծնեաւ Լուսնդաքն, 1914 թւին: Յովհաննէս խանի մահանալն 1914 զատիկ դուրս էկած չորէկշաբաթի հիրիկուն վախճանեց:

*Այլ.*

Յովաննէս խանի մահանալն 1914 զատիկ դուրս էկած:

*Այլ.*

Օվանէս ծնվեց 1926 թվի:

*Այլ.*

Սալբին վախճանեց 1930 թվին:

*Ծանոթ.* Գրիգորիս արքեպիսկոպոսը 1872-1888 թթ. եղել է Իրանա-Հնդկաստանի թեմի առաջնորդ (նստավայրը՝ Նոր Ջուղա):

ԻԵ. Մաշտոց, տպագրության վայրը և թիվը՝ անհայտ, ԺԹ դ.

*Հիշատակություն.*

Այս Մաշտոցն տր. Պետրոսն ընծայ տուաւ ի **Նազարէթայ եկեղեցուն** ի **Կլկթա.**:

*Այլ.*

Արժանապատիւ սրբակրօն տր. Գրիգորիս Տր.-Պետրոսեն., բարութեամբ զբարի հոգին իւր աւանդեաց ի ձեռն բարի հրեշտակի առ տրն. ամի., թվին 1889, 3 յունվարի: Գրց. Ն. Խ. Ծ. Վղնս. Մինսեան.:

ԻԶ. Աստուածաշունչ, տպագրության վայրը և թիվը՝ անհայտ, ԺԹ դ.

*Հիշատակություն.*

Աստուած պարգևէց մին որդի՝ Աղազօլ անուամբ, Կարապետ Աղաբէգին համբարձում օրն թիւ 1891: Աստուած պարգևէց մին օրիորդ՝ Ծաղիկ անուամբ ջնօրխէքին. 1893:

ԻԷ. Աստուածաշունչ, Կոստանդնուպոլիս, 1896 թ.

*Հիշատակություններ.*

Հոկտեմբեր 15/27, 1877 **Բումէին** գիւղում ծնուեց Յովհաննէս Թովմասեան:

Յունվար 7/19, 1881 **Բումէին** գիւղում ծնուեց Մարիամ Թովմասեան:

**Թէհրան** 18/30 ապրիլ 1891 ծնուեց Հռիփսիմէ Թովմասեան:

9/22 մայիս 1901 նշանատրութիւն՝ օր. Ովսաննա Ն. Մարտիրոսեան, Յովհաննէս Թովմասեանի հետ:

10/23 փետրվար 1902 վերոյիշեալների ամուսնութիւնը **Ս. Գէորգ** եկեղեցում:

Հռիփսիմէ Թովմասեան, 8-10-02 **Թէհրան**:

**Թէհրան** 16/29 մարտ 1903 ծնուեց Ներսէս Յովհաննէս Թովմասեան, կնքահայր՝ Հայրապետ Մ. Մինասեան:

**Թէհրան** 16/29 ապրիլ 1906 ծնուեց Արշամ Յովհաննէս Թովմասեան, կնքահայր՝ Հայրապետ Մ. Մինասեան:

**Թէհրան** 2/15 սեպտեմբեր 1909 ծնուեց Թովմաս Յովհաննէս Թովմասեան, կնքահայր՝ Հայրապետ Մ. Մինասեան:

Սեպտեմբեր 4 ն(որ) տ(ոմար) 1909 մեռաւ Թովմաս Այվազեան՝ հայրս, Յ. Թովմասեան: Կաթուածահար լինելուց մէկ ամիս յետոյ:

1913 յունվար 2/15 մեռաւ Հռիփսիմէ Թովմասեան **Փարիզում** պսակուելուց 9 ամիս յետոյ:

1913 օգոստոս 25 ն(որ) տ(ոմար) կիւրակէ օրն Մարիամ Մինասեան(ին)՝ քոյրս, ծնաւ մի աղջիկ՝ Ցողիկ:

1916 25/6/16-8/7/16 Փասանդ Թովմասեան քանըր հիւանդութիւնից, 6.55-ին:

1933 հոկտ. 5-ին Ներսէս Թովմասեանը **Փարիզում** ամուսնացաւ ընդ օր. Յասմիկ Քարամեանի:

1938 փետրուար 28, ծնունդ Ժասիկ Թովմասեանի՝ դուստրը Արշամ և Հանսիէթ Թովմասեանների:

1938 յուլիս 1-ին մահացաւ Յովհաննէս Թովմասեան առաւօտեան ժամը 9-ին:

Յունուար 23, 1939 ամուսնութիւն Թովմաս Թովմասեանի ընդ. օր. Ժենեա Շաքարեանի:

1942 փետ. 17 ծնունդ Գալինէ Թովմասեանի՝ դուստրը Արշամ և Հանսիէթ Թովմասեանների:

1945 ապրիլ 24 մահ. Գալինէ Թովմասեանի՝ դուստրը Արշամ և Հանսիէթ Թովմաս:

1960 սեպտեմբեր 10-ին մահացաւ Յասմիկ Թովմասեան առաւօտ ժամը 6.1/2-ին:

1971 ապրիլ 25-ին մահացաւ Արշամ Թովմասեան:

1976 օգոստոս 6-ին մահացաւ Յասմիկ Թովմասեան՝ Քարամեան:

Դեկտեմբեր 31, 1986 ժամը 7 ճաշից յետոյ մահացաւ տիկ. Ժենեա Թովմասեան՝ Շաքարեան **Ջամ** հիւանդանոցում:

1989 մահացաւ Ներսես Թովմասեանը, **Գորգան՝ Խանբըրին**, **Նէյթափէ** գիւղում էր բնակարանում:

2003 թւին մահացաւ Հանրետ Թովմասեան՝ Աբգարը, **Ֆրանսիայում**:

2003 թվի հոկտեմբերի 4-ին՝ գիշերվա ժամը 11-ին, կյանքից հավետ հեռացավ Թովմաս Թովմասյանը:

*Ծանոթ.* Թովմաս Թովմասյան՝ իրանահայ ճարտարապետ:

ԻԸ. Հրաւիրակ երկրին աւետեաց, յԵրուսաղէմ, 1892 թ., հեղ.՝ Խրիմեան Հայրիկ.

*Հիշատակություններ.*

Վեհափառ Հայրիկից նուէր, **Թաւրիզի Արամեան ընթերցարանին**: 1893 հոկ. 1: **Ս. Էջմիածին**:

*Ծանոթ.* Խրիմյան Հայրիկ (Մկրտիչ Ա Վանեցի, 1820-1907 թթ.). 1893 թ. սեպտեմբերի 26-ին օծվել է Ամենայն հայոց կաթողիկոս:



ԻԹ. Սաղմոս, տպագրության վայրը և թիվը.՝ անհայտ, ԺԹ դ.

*Հիշատակություն.*

Այս գիրքը պատկանում ա Վարթան Բեգզաթեան: Ի **Ազնա** գիւղը, 1912: Վարթան Բէզաթեանի ծնելը 1895 հուլիսի 15 և պըսակը 1915 դեկտեմբերի 15:

*Այլ.*

Այս գիրքը պատկանում է Վարթան Բէզաթեան: Ի **Ազնա** գիւղն 1912:



*Կնքադրոշմ.* مسیح ۱۳۳۹ وارطان.

*Թարգ.* Քրիստոս, 1339 (1920-1921 թթ.): Վարդան:

Լ. Նոր Կտակարան, Կոստանդնուպօլիս, 1901 թ.

*Հիշատակություն.*

Ի **Մամուքա** թիւ 1914, մեծապատիւ պարոն Յովսէփ Սուքեասեան: Ի **Մամուքա** պարոն Սուքեաս Ավետիկեան: Ի **Մամուքա** 1914 թիւ, Յովսէփ:

*Այլ.*

Սիմոն Մարտիրոս Սուքեասեան, [Թու]մաս, *(ջնջված)*...ով, [Ա]լբինագ, ի **Մամուքա**, 1917 թուի, յունվարի 27:

*Այլ.*

Ի **Մամուքա** թիւ, մեծապատիւ պարոն Յովսէփ Սուքեասեան: Ի **Մամուքա** ստացայ այսօր Սուքեաս Ավետիկեան:

ԼԱ. Նարեկ աղօթից, հարազատ եւ զգուշաւոր լուծմամբ, ճորոգ բացայայտեալ, Վէնետիկ, 1801 թ.

*Հիշատակություն.*

1914 թիւ օգոստոս 8-ին կեսօրից, ապա ժամը 5,1/2-ին արեգակը խաւարեց, տեւեց մի ժամ մինչ կանոնաւոր լուսաւորուեց, այնպէս խաւարեց, որ աստղերը փայլում էին: Օգոստոս 9-ին կատարուեց թափօր և աղօթք, աշխարհին խաղաղութն. և հիւանդոց բժշկութեան համար, զենուեցին 45 զոհեր գիւղի շրջակայքումը, աջիամբոյր եկաւ ուքը քաշկինակներ 94 ...նիք և տասը շահի:

ԼԲ. Աւետարան ճաշու, յԵրուսաղէմ, 1868 թ.

*Հիշատակություն.*

N 172 սեփականութիւն **Մեշէդի** հայոց ս. աղօթատան, **Մեշեդ** 10 ապրիլ 1942 թ.: Ի դիմաց **Մեշէդի** հայ եկեղ. վարչութեան Իշխանբէկխան(եան):

*Այլ.*

Գնեցինք ս. աւետարանս ճաշու **Մեշէդի** հայոց եկեղեցական վարչութիւնից, վաքսուն րեալով համաձայն անդորրագիր N 1578, 15 յունիս 1942 թիւ և վրան փակցնելով մի արծաթէ խաչ և մետաքսէ



բորդօ թաւիշ` մոյգ կարմիր, խաչի վրայ փորագրուած է` 19 VI 42, Պօղոս Ղօթանեանի յիշատակին **Մեշէդի** հայոց ս. աղօթարանին իւր զաւակներից: Սոյն ս. աւետարանս նւիրեցին **Մէշէդի** ս. աղօթատան եղբայրք Ղօթանեաններ ոսկերչատուն «Վան» ի յիշատակ իրենց հանգուցեալ հօր Պօղոս Ղօթանեանի յիշատակին, **Մէշեդ** 20 յունիս 1942 թիւ:

*Կնքադրոշմ.*

Հայոց եկեղեցական վարչութիւն, **Մէշէդ**, 1938:

*Արձանագրություն կազմին ամրացված արծաթյա խաչի պատվանդանին, 3 տող.*

1942-VI-5 | Պողոս Ղօթանեանի յիշատակին, | **Մեշէդի** հայ ս. աղօթարանին, իւր զաւակներից:

ԼԳ. Աւետարան ատենի, յԵրուսաղէմ, 1899 թ.

*Հիշատակություն.*

Մատեան N 171, սեփականութիւն **Մեշէդի** հայոց ս. աղօթատան: Ի դիմաց **Մեշէդի** հայ եկեղ. վարչութեան Իշխանբէկխան(եան): **Մեշեդ** 10 ապրիլ 1942 թիւ:

*Այլ.*

Հանգուցեալ վաղաթառամ Էդուարդ Դանիէլեանի յիշատակին իւր սկագիր ծնողներից` Արուսեակ և Արսէն Դանիէլեաններից: **Մեշէդ** 12 յուլիս 1942 թիւ:

*Այլ.*

Սոյն Ատենի աւետարանը գնել են **Մեշէդի** հայոց եկեղեցական վարչութիւնից տիկ. Արուսեակ և Արսէն Դանիէլեանները անդորրագիր N 1572, 10 յունիս 1942 թիւ և վրան արծաթապատելով, մի երեսը` Քրիստոսի ս. խաչելութիւնը, իսկ միւս երեսը` ս. յարութիւնը:









Երկու երեսն էլ ծաղկազարդած է փորագրութեամբ և նւիրել են **Մե-շէդի** հայոց ս. աղօթատան ի յիշատակ իրենց սիրասուն և անմոռա-նալի անդրանիկ որդու, վաղամեռ Էդւարդ Դանիէլեանի: Ծնեալ ի քաղաքն **Ախաբադ** 1919 թւին և մահացեալ ի քաղաքն **Մեշէդ** 1942 թւի, մախ 28-ին: Թող յիշատակը անմեռ մնայ բոլորի սրտում: **Մե-շէդ** 12 յուլիս 1942 թւի:

*Կնքաղրոշմ.*

Հայոց եկեղեցական վարչութիւն, **Մէշէդ**, 1938:

*Արձանագրություն արծաթյա կազմին, 10 տող.*

Վաղաթառամ | Էդւարդ Դանէլեանի յիշատակին, | նւիրում ենք **Մե-շէդի** հայոց | ս. աղօթատան, | իւր վշտակիր ծնողներից` | Արուսեակ և Արսէն Դանէլեանից: | Մահացաւ ի քաղաքն **Մեշեդ**, 28 մախ 1942 թւ:

ԼԴ. Գիրք սաղմոսաց Դավթի, յԵրուսաղէմ, 1874 թ.

*Հիշատակություն.*

Նուէր Յարութիւն սրկք. Առաքելեանի, պ. Յարութիւն Կարապե-տեանի կողմէ **Զէյթունցւոյ**:





ԼԵ. Գիրք պատմուե. սբյ. և մեծի քաղաքիս այ. Եէմիս. և սբց. տնօրին կնաց. տեղեաց տն. մերոյ յի. Քի., յԵրուսաղէմ, 1727 թ. հեղ.` Յովհաննէս Հաննայ.

*Հիշատակություն.*

Հիշատկ. է գիրքս այս քօյիմչիպաշի մահտեսի Ավետեանց տեր Աստվածայտուրին, որ ամէն կարդալումին հիշէ եուրեան, ամէն:



ԼԶ. Անհայտ գիրք, տպագրության վայրը և թիվը` անհայտ, ԺԹ դ.

*Հիշատակություն.*

Վսն. գրչայփորձուեն. զօր գրեցի գերական ու դուք լսէցէք միա-բան, ու երբ հանդիբիք ի մատեան, զիս յիշեցէք մի բէրան: Զօր շա-րադրէցի այսքան, Բարսեղ ծոյ. Գալստանեն.:

*Այլ.*

Ազնիւ պրն. Թաթոս:





ԼԷ. Աւետարան, տպագրության վայրը և թիվը` անհայտ, ԺԸ դ.

Ավետարանի վերջում ամրացվել է հայատառ օսմաներեն մի ձեռագիր: Վերջինս Թամպուրի Արուիթի աշխատության` հայա-գիտությանն անհայտ երրորդ ձեռագիր տարբերակն է (առաջինը գտնվում է Վենետիկում, հայատառ օսմաներենով հրատարակվել է 1800 թ., հայերեն թարգմանվել 1941 թ., իսկ երկրորդ օրինակը` Մատենադարանում: Թամպուրի Արուիթի աշխատության այս երրորդ տարբերակից մեզ հասած թերթերի քանակը 37 է` 1-ից 78-ը համարակալված էջերով: Պակասում են ձեռագրի էջ 19-20 և 29-30, ինչպես նաև շարունակությունը:

*Հիշատակություն ավետարանին.*

Յիշատակ գրեց Ս. Ն. 1943 թւի. փետրվար 19-ին: **Էրզրում**, **Թավրիզ**, **Ռէշտ**:





# ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբարիք (Բուրվարի շրջ.) 22
Աբբարիք (Նոր Ջուղա) 19
Ագուլիս 2, 9, 31-32
Ազնա (Բուրվարի շրջ.) 22
Ազնա (Գյափլայի շրջ.) 23, 60-61, 64
Ակգոր 2, 24
Ամիդ 6
Անավշ (Բուրվարի շրջ.) 21-23
Անթիլիաս 1
Աստապատ, Ասխաբադ 34, 66
Արամյան ընթերցարան (Թավրիզ) 64
Բաղմադի, Բաղմովտի (Գյափլայի շրջ.) 20-21, 23
Բումեին 63
Բուրվարի շրջան 21-23
Բուրք (Բուրվարի շրջ.) 22-23
Գոլբհար (Բուրվարի շրջ.) 22
Գողթն գավառ 48
Գորգանի շրջան 64
Գովզ (Բուրվարի շրջ.) 22-23
Գուրան, (Բուրվարի շրջ.) 22
Գուրջի (Գյափլայի շրջ.) 23
Դար-Ղազվին 6
Դեյնով, (Բուրվարի շրջ.) 22
Երզնկա գավառ 2, 13
Երուսաղեմ 1, 64-66
Զառնա (Գյափլայի շրջ.) 23
Զեյթուն 66
Զմմառ 1
Զոռ 37
Էջմիածին 57
Էրզրում 66
Թավրիզ 60, 64, 66
Թեհրան 1-4, 6, 8-9, 11, 16, 20, 22-23, 33, 37, 58-64
Թոխմար (Գյափլայի շրջ.) 23
Իրան 2-3
Խաիբբիա, (Բուրվարի շրջ.) 22
Խանբրբին (Գորգան շրջ.) 64
Խաքբադ (Բուրվարի շրջ.) 22
Խոսրովաբադ  (Բուրվարի շրջ.) 22
Խորզնի (Բուրվարի շրջ.) 22
Խորհրդային Հայաստան 1
Կալկաթա 59-60, 63
Կ. Պոլիս 59, 61-64
Հալակ (Հալաք) 16
Հալեպ 1
Հակոբ Ալփյան եկեղեցի (Միջի թաղ, Ագուլիս) 2, 31-32
Հաջիաբադ (Գյափլայի շրջ.) 23
Համադան 9
Հայաստան 22
Հեշմաթիե թաղ (Թեհրան) 20
Հնդկաստան 63
Հոսենաբադ (Գյափլայի շրջ.) 23
Հումա (Բուրվարի շրջ.) 22
Ձորագյուղ 59
Ձորն Շամբա (Դարաշամբ) 34
Ղազբին 58
Ղարադաղ 7
Ղարաքհարիզ (Բուրվարի շրջ.) 22
Ղրիմ 59
Մամուքա 64
Մարզիան (Գյափլայի շրջ.) 23
Մաշհադ 8-10, 65-66
Մեժնգեր 43
Միջի թաղ (Ագուլիս) 2, 32-33
Մոսկվա 59-60
Մուժանբար 62
Մուղանակ (Բուրվարի շրջ.) 22
Նախիջևան 34
Նաջիվանդ 23
Նասրաբադ (Բուրվարի շրջ.) 22
Նեյթափե (Գորգանի շրջ.) 64
Նոր Ջուղա 1-2, 8, 19, 22, 28, 34, 58, 62-63
Նոր Ջուղայի շրջան 19
Շահրուդ 11
Շատվան (Ռշտունիք գվռ.) 17
Շավրավա (Բուրվարի շրջ.) 22-23
Շիրազ 59
Շուշի 4, 11, 62
Չանաղչի 60
Չարբազ, Չարբաս (Բուրվարի շրջ.) 21-23
Չարթադ (Գյափլայի շրջ.) 23
Չիշմփար (Բուրվարի շրջ.) 22
Չորս 34
Չունխրս (Բուրվարի շրջ.) 22
Պարսկաստան 63
Պռաստինք (Երզնկա գվռ.) 2, 12-13
Ջափլաղի, Գյափլայի շրջան 20, 23
Ջհանխոշ, Ջանխոշ (Բուրվարի շրջ.) 21-23
Ռայիլ (Բուրվարի շրջ.) 22
Ռեշտ 66
Ռշտունիք գավառ 17
Սանգսֆիդ (Բուրվարի շրջ.) 22, 61
Սբ. Ամենափրկիչ եկղ. (Թեհրան) 4
Սբ. Ամենափրկիչ վանք (Նոր Ջուղա) 1-2, 28, 62-63
Սբ. Աստվածածին եկղ. 6, 11
Սբ. Աստվածածին եկղ. (Ազնա) 61
Սբ. Աստվածածին եկղ. (Թեհրան) 1, 33, 60
Սբ. Աստվածածին եկղ. (Շատվան) 17
Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկղ. (Թեհրան) 20
Սբ. Գևորգ եկղ. 5, 7
Սբ. Գևորգ եկղ. (Ակգոր) 24
Սբ. Գևորգ եկղ. (Թեհրան) 6, 16, 64
Սբ. Գևորգ Զորավար եկղ. (Շատվան) 17
Սբ. Գևորգ Մեծ Զինավոր, Սբ. Զինավոր (Պռաստինք) 2, 12-14
Սբ. Էջմիածին 1, 37, 63-64
Սբ. Ընձայեաց լույս եկղ. (Միջի թաղ, Ագուլիս) 2, 31-33
Սբ. Թադեոս եկղ. (Թեհրան) 4, 37

Սբ. Թոմ. 43
Սբ. Թովմա առաքյալ վանք (Գողթն գավառ) 48
Սբ. Հակոբ Սքանչելագործ (Ակգոր) 24
Սբ. Հակոբյանց վանք (Երուսաղեմ) 1
Սբ. Ղազար վանք (Վենետիկ) 1
Սբ. Մինաս եկղ. (Վանակ) 8, 29
Սբ. Նազարեթա եկղ. (Կալկաթա) 63
Սբ. Նշան եկղ. (Ակգոր) 24
Սբ. Ստեփանոս եկղ. (Համադան) 11
Սբ. Ստեփանոս Նախավկայի վանք (Դարաշամբ) 34, 47
Սբ. Ստեփանոս Նախավկա (Շատվան) 17
Սբ. Տիրամոր վանք (Զմմառ) 1
Սբ. Քրիստափոր (Պռաստինք) 2, 12-13
Սպահան 22
Վան 64
Վանակ 5, 8, 29, 62
Վենետիկ 1, 59-60, 62-63, 65-66
Վերին Չանաղչի 7
Տփխիս 62-63
Ուռհա 57
Փահրա (Բուրվարի շրջ.) 22-23
Փանրահ (Բուրվարի շրջ.) 22
Փարիզ 54
Փարմիշան (Բուրվարի շրջ.) 22
Փերիայի շրջան 22
Փրչստան (Գյափլայի շրջ.) 23
Քավազ (Բուրվարի շրջ.) 22
Քեարա 23
Քըրթ (Գյափլայի շրջ.) 23
Քունսորխ, Քունսոր (Բուրվարի շրջ.) 22-23
Ֆարաջաբադ (Բուրվարի շրջ.) 22
Ֆրանսիա 64


Արմեն Հախնազարյան
1941









ISBN 978-9939-843-50-6

CALOUSTE GULBENKIAN FOUNDATION

ԳԱԼՈՒՍՏ ԿՈՒԼՊԵՆԿԵԱՆ
ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

GALOUSTE GULEBENKIAN
FOUNDATION

ՀՀ ԿԳՄՍ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

THE MINISTRY OF ESCS OF
REPUBLIC OF ARMENIA

ՀԱՅԿԱԿԱՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
RESEARCH ON ARMENIAN
ARCHITECTURE